

ԱՆԴՐԱՆԻԿ

ԱՌԱՔԵԼՈՅ
ՎԱՆՔԻՆ
ԿՈՒԻԼ



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ

**ԱՌԱՔԵԼՈՑ
ՎԱՆՔԻՆ ԿՌԻԻԸ**

(Հայ յեղափոխութենէն դրուագ մը)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2012

ՀՏԴ 941(479.25)

ԳՄԴ 63.3(2Հ)

Ա 583

Հրատարակված է ՀՀ
Մշակույթի նախարարության
պատվերով

Զորավարի Հուշերը գրի է առել
Լևոն Կ. Լյուկեճյանը

ԱՆԴՐԱՆԻԿ

Ա 583 Առաքելոց վանքին կոիւր / Անդրանիկ, Եր.,
ԵՊՀ Հրատ., 2012, 116 էջ:

Գրքույկը, որ առաջին անգամ հրատարակվել է Բոստոնում 1924 թ., ամփոփում է Զորավար Անդրանիկի Հուշերը՝ 1901 թ. Մշո Առաքելոց վանքում ապաստանած Հայ Փիղայինների՝ թուրքական բռնապետության դեմ հերոսական պայքարի մասին: Այս հերոսամարտի մասին շատ է գրվել, բայց այս պատուճր առավել հավաստի է ու վավերական, քանի որ պատճռողը ինքը՝ Զորավարն է:

Շարադրանքը ներկայացվում է ամփոփոխ՝ ըստ բոստոնյան հրատարակության:

ՀՏԴ 941 (479.25)

ԳՄԴ 63.3 (2 Հ)

ISBN 978-5-8084-1560-7

© ԵՊՀ Հրատ., 2012

ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔԻՆ ԿՌԻԻԸ

(ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵՆԷՆ ԴՐՈՒԱԳ ՄԸ)

Պատմեց՝
ԶՕՐ. ԱՆԴՐԱՆԻԿ



Գրի Առաւ՝
Լ. Կ. ԼԻԻԼԷՃԵԱՆ

ՏՊԱՐԱՆ «ՊԱՅՔԱՐ»Ի
Պ Օ Ս Թ Ը Ն

1924

Այս Գրքին Ձուտ Հասոյթը
Յատկացուած է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ
Ի Յիշատակ
ԶՕՐ. ԱՆԴՐԱՆԻԿԻ
ՆԱՀԱՏԱԿ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒՆ



ՔԱՆԻ ՄԸ՛ՆՕՍԻ

ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔԻ ԿՌԻԻԻՆ ԱՌԹԻԻ*

Մինչեւ այսօր տակաւին Հայ ժողովուրդին անծանօթ կը մնայ ճշգրիտ պատմութիւնը բոլոր այն դիւցազնամարտերուն որոնք մղուեցան մեր հերոսներէն 1890էն ի վեր:

... Մեր պարկեշտ եւ հայրենասէր «ճան ֆէտայիները» գործեցին եւ ծառայեցին Հայ ժողովուրդին իրենց նշանարան ունենալով «զոհուիլ Ազգին համար մինչեւ որ ձեռք բերուի ան»: Անոնք իրենց նպատակին փարած կռուեցան եւ իրենց կարգը կատարեցին լուսաշող փառաւոր յիշատակ մը թողելով իրենց ետեւ: Անոնց գործերը, անոնց կեանքը եւ հերոսամարտերը մեր պարծանքը եղան, մենք անոնցմով հրճուեցանք, մենք անոնցմով ցնծացինք եւ մենք անոնցմով խանդավառուեցանք:

* Տպագրվում է որոշ կրճատումներով:

Առաքելոց Վանքի հերոսամարտը մեր յեղափոխական պատմութեան փառաւոր տեսիլներէն մէկն է, դէպք մը որ ոչ միայն թուրք կառավարութիւնը քիւրտ ու թուրք ժողովուրդին հետ հիացուց, այլ արմատ դրաւ անոնց սրտերուն մէջ թէ Հայը գիտէ կռուիլ...:

... Ոչ ոք չի գիտեր պատմութիւնը այդ դիւցազնամարտին իր հարազատ ու իրական ձեւին մէջ: Կ'անցնին օրէ օր այդ կռիւին հանդիսատեսները, ինչպէս անցան հոն կռուող «ճան Փէտայիները», ուստի պէտք է պահել զայն, պէտք է ապրեցնել զայն, պէտք է անով եւ անոր նման քաջամարտիկ կռիւներով եւ դէպքերով ներշնչել մեր նոր սերունդները երբ կը կարմրինք վերջին տխուր պատկերներուն առջեւ եւ սիրտ չենք ըներ այդ դէպքերուն պատմութիւնները փսփսալ:

Առաքելոց Վանքի դիւցազնամարտի հերոսը մեր մէջ է այսօր: Օր մը մենք կ'երգէինք անոր քաջագործութիւնները, օր մը ան երազ էր մեզ համար, օր մը աներեւոյթ սարսափն էր ան թուրքին եւ քիւրտին, որ

կը սաւառնէր սարէ սար, լեռնէ լեռ ցեղին հաւաքական յոյսը եւ վստահութիւնը իրեն վրայ կեդրոնացուցած: Ժողովուրդին այդ համեստ եւ **մեծ մարդը** խաղաղ եւ հանդարտ է հոս՝ այս օտար միջավայրին մէջ: Ան մանուկին հետ մանուկի մը պէս կը ժպտի, պատանիին ընկեր է, եւ չափահասին ու ծերունիին բարեկամը: Հերոսը **հին** օրերով չի պարծիր, **նոր** տեսիլներ կը փնտռէ, նոր արիւններ կ'երազէ...:

Եթէ Յոյներ Լէօնիդասով կը պարծին, մենք Հայերս **Թէրմօփիլէի** գոյամարտէն շատ փառաւոր եւ համեմատաբար շատ արժէքաւոր պայքար մը մղած ենք «ափ մը ճան ֆէտայիներով» Առաքելոց Վանքի նուիրական պարիսպներուն տակ յաղթանակին հետ մէկտեղ: Ուժ մը չկար, պետութիւն մը չէր օգներ անոնց, անոնք իրենց բազուկներուն վստահ՝ կրցան կերտել փառաւոր էջ մը Հայ պատմութեան համար:

Երկա՛ր շատ երկար տարիներ անցեր են այդ կռիւի օրերէն, բայց **Անդրանիկ Փաշայի** հիանալի յիշողութիւնը զմայլանք մը ունի բոլոր ունկնդիրներուն: Ան կը պատմէ այդ

դէպքերը իբր թէ երէկ պատահած ըլլային: Կը յիշէ դէպքերը մանրամասնօրէն, իրենց վայրկեաններով, ժամերով նկարագրելով նոյն ատեն օդին պարզ կամ ձիւնախառն վիճակը, մոզական եւ ներշնչող տպաւորութեամբ:

Երբ Զօրաւար Անդրանիկ Առաքելոց Վանքի կոիւին պատմութիւնը կը պատմէր, ջանացի կարելի եղած չափով պահել անոր բռները, անոր գեղեցիկ նկարագրութիւնը եւ բանաձեւերը: Երբ տարիներ առաջ տեղի ունեցող այդ կոիւին պատմութիւնը կը պատմէր կարծես ինքզինք Վանքի նուիրական պարիսպներուն տակ կը գտնէր: Անոր աչքերը կը վառէին զայրոյթով, դէմքը ահաւոր երեւոյթ մը կ'առնէր վրէժի վառ գոյներով, երբ կը հեզնէր փախուստը թուրք զինուորին, «ճերմակ շապիկներ» հագած ձիւնին մէջէն իր զինուորներուն առջեւ ինկած դէպի ազատութիւն, դէպի յաղթանակ կը քալէր, չէր կրնար հանդարտ մնալ, չէր կրնար չի մոլեգնիլ եւ բորբոքիլ հին փառաւոր այդ պատկերը ներկայացնելու պահուն: Առիւծ մըն էր հօր, վագր

մըն էր որ կը փշրէր, կ'աւերէր ամէն բան կարծես: Կը հանդարտէր մէկէն, քրտինքով լեցուած իր ալեհեր ճակատը, ծովի չափ խորունկ եւ գաղտնիքներով լեցուն ծով աչքերը սիրուն, եւ այտերը ճերմկցած կը սրբէր եւ կը ժպտէր վազանցուկ ժպտով մը անցեալի այդ փառաւոր յաղթանակին, անցեալի այդ առոյգ օրերուն առջեւ... եւ նորէն տարուած հի՛ն տեսիլներէն կը յուզուէր, ցեղին յաղթանակին, ցեղին ազատութեան եւ բարօրութեան համար...:

Առաքելոց Վանքի կոիւին նկարագրութեան մէջ ոչ գրական եւ ոչ ալ բանաստեղծական թռիչքներ կան, այլ պարզ պատմութիւնը, **պատմութեան համար:** Կ'արժէ կարդալ զայն իր հարազատ եւ իրական ձեւին մէջ: Կ'արժէ որ մեր մայրերը պատմեն զայն իրենց պզտիկներուն ներշնչելու եւ արթնցնելու վրէժի եւ արժանապատուութեան կայծը: Կ'արժէ որ Հայ **բանաստեղծը** եւ Հայ **գրագէտը** երգեն զայն, ինչպէս օր մը մեր հայրերը երգեցին **Հայկն ու Բելը, Վարդանն ու Վահագնը:**

Մերն է այսօր Առաքելոց Վանքի կոիւր
փառաւոր կոիւներու հետ: Մենք բախտա-
ւորներ ենք որ **մեր մէջ կը գտնենք այդ
Աննման Հերոսը:** Մենք երգեցինք Վարդանը
եւ Վահանը, բայց մենք մեր աչքերով կը
տեսնենք եւ կը վայելենք **Անդրանիկը,** ժո-
ղովուրդին Մեծ Մարդը եւ հարազատ գա-
ւակը Հայ Յեղին:

ԼԵՒՈՆ Կ. ԼԻՒԼԷՃԵԱՆ

Ֆրէզնօ, Ապրիլ 5, 1924

ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔԻՆ ԿՌԻԻԸ

1901 տարուան Հոկտեմբեր ամիան էր: Կէլիկուզան գիւղին մէջ մեր զինուորներէն գաղտնի խորհրդակցական ժողով մը գումարեցինք: Ես, Գէորգ, Յարութիւն, Վաղարշակ եւ Հաճի Յակոբ: Մեր խորհրդակցութեան նպատակն էր միջոց մը եւ ճամբայ մը գտնել, հայ ժողովուրդին վրայ ծանրացող տառապանքը մեղմելու եւ թրքական ու քրտական հարստահարութիւններն ու հալածանքները դադարեցնելու, քանզի քիւրտն ու թուրքը ազատ եւ անվախ հայ գիւղերուն մէջ իրենց ոճիրներն ու ամէն տեսակ բռնութիւնները կը գործադրէին եւ կառավարութիւնը այս բոլորը տեսնելով չէր պատժեր, չէր սանձահարեր եւ չէր սաստեր: Կառավարութիւնը ոչ միայն իր աչքերը կը գոցէր չի տեսնելու եւ չի լսելու այդ ոճիրներուն պատմութիւնները, այլ ներքնապէս կը քաջալերէր եւ կը կազմակերպէր զանոնք, յառաջ տանելու իրենց հայահալած ու հայա-

ջինջ քաղաքականութիւնը, պսակելով անոնց կուրծքերը պատուանշաններով եւ առանձնաշնորհումներ պարգեւելով:

Տիգրանակերտէն մինչեւ Պարսից սահմանագլուխը 150.000 քիւրտեր եւ համիտիէներ զինուած թրքական արդիական հրացաններով եւ պիստոյքներով սուլթան Համիտին կամքը կը կատարէին: Քրտական այդ աշիրէթները – Պատկանցի, Սլիվանցի, Խըյանցի, Պէքրտնցի, Պօթանցի, Խէրազնցի, Պոչըղցի, Պէլէկցի, Մըլլանցի, Բէշգօթանցի, Հէսնանցի, Սրիկցի, Ճէլալցի, Հայտարանցի, Մուխուրցի, Թախուրցի, Մէղըրէկցի եւ ասոնց նման մեծ ու փոքր էշիրէթներ սիրաշահուած էին այլեւայլ խոստումներով: Համիտիէները բացարձակ առանձնաշնորհումներ ունէին: 15 % հազիւ տուրք կը վճարէին կառավարութեան, այն ալ ձեւականութեան համար: Թուրք կառավարութիւնը չէր ուզեր ոնէ գնով անոնց բարեկամութիւնը խանգարել ներքին խլրտում եւ ըմբոստացում յառաջ չի բերելու իրեն դէմ:

Պարզ շատ պարզ իրողութիւն մըն էր թէ թուրք կառավարութիւնը կը ջանար ամէն գնով իրեն կապել այդ քիւրտ էշիրէթներուն

բարեկամութիւնը հայ ժողովուրդը ճնշելու, հարստահարելու եւ փճացնելու: Այդ ճնշումները եւ կեղեքումները հայ ժողովուրդին շինարար ձեռքերը եւ ոգին կը ջլատէին, միշտ ստրուկ եւ միշտ հլու գերին դարձնելու հայ ժողովուրդը թուրք եւ քիւրտ ժողովուրդներուն: Քիւրտն ու համիտիէն, թուրք ժողովուրդին հետ իրաւունք ունէին իրենց տուններուն մէջ, պատերէն կախել հրացաններ, ատրճանակներ եւ թուրեր ազատ ու անվախ, բայց հայը զմելի մը անզամ ունենալու իրաւունքէն զրկուած էր: Պէտք էր հայը հալածուէր, հարստահարուէր ու փրճանար: Այս էր թուրք կառավարութեան մտապատկերը: Փոքր ու աննշան պատրուակներ քմահաճ ու անբարեխիղճ գործեր՝ շարունակ պատճառներ տուած էին կառավարութեան բանտերը հայ բանտարկեալներով լեցնելու, ու հայ ժողովուրդը սուգի, սարսափի եւ արցունքի ենթարկելու: Հայ գիւղացին ամէն օր նոր նոր ցաւերով լեցուած լուռ հանդիսատեսն էր սիրտ հատցընող եւ սիրտ կսկծացնող ոճիրներու: Հայ գիւղերը աւերակի, արիւնի եւ սուգի մէջ կը խեղդուէին, ու մէկը չկար որ իրենց ցա-

ւերուն, իրենց վշտին դարման մը ճարէր եւ տանէր: Հայ խելակորոյս շինականը իր ցաւը, իր սրտին մորմոքը եւ կակիծը, իր տառապանքները ամէն օր, ամէն ժամ մեղի կը հասցնէր, սպասելով դարման մը եւ փրկութիւն մը:

Մուշեցի թուրք ոստիկանապետ մը Մոկացի Եսթեր անունով աղջիկ մը բռնաբարած էր: Իր պիղծ ընթացքը երկրորդ անգամ գործադրելու ատեն Եսթերի եղբայրը եւ հորեղբորորդին չարագործը դաշոյնահար սպաննած եւ լեռը փախած էին: Այս պիղծ թուրքին սպանութեան համար տասնեւհինգ անմեղ հայեր բանտարկուած էին անլուր չարչարանքներու ենթարկուելով:

Այրուած էին Մոկունք գիւղին տունները եւ ժողովարանը՝ սարսափի եւ հալածանքի ուրուականը տարածելով Մուշի դաշտի հայ գիւղերուն վերեւ:

Խէրզէնցի էշիրէթապետ Պըշարը Խէլիլ իր բարբարոսութիւնները յառաջ կը տաներ սանձարձակ ու անվախ քաջալերուած կառավարութենէն: Այս այն Խէլիլն էր որ Սերոր փաշային գլուխը կտրած, Սերորի եղբայրը եւ ութը զինուորները սպաննած, Սե-

րորին գլուխն ալ ձողի անցուցած Մուշի եւ Պիթլիսի հրապարակներուն վրայ ցոյցի դրած էր: Այս այն չարագործ հրէշն էր՝ որ Ալի փաշայի հետ Դալուորիկի Սպաղանք գիւղին քսանեւեօթը կին եւ երեխայ Տէր Պետրոս քահանային հետ սպաննել տուած էր, եւ քառասուն եւ ութը ժամ վերջը գիւղացիներէն թաղուած այդ դիակները հանած իրենց գերեզմաններէն, Ռէխս Մակարի տան մէջ լեցնելով հարիւր ութսուն խուրձ խոտ քարիւղով թրջելով այրած էր զանոնք բոլորը անոնց հետքերը անհետացնելու համար:

Նոյն Խէլիլն էր որ իր կուրծքը սուլթան Համիտի պատուանշանով զարդարած աւելի վայրագ, աւելի անասնացած իր խժդժութիւնները եւ հարստահարութիւնները յառաջ կը տանէր խաղաղիկ ու անմեղ հայ գիւղացիին վրայ: Այս Խէլիլն էր որ **Հէթինկ** գիւղին վրայ յարձակելով եօթը երիտասարդներ բռնած թեւերը կապած, գետը իջեցուցած հրացանազարկ ըրած էր: Ես այս ոճրագործը իմ ձեռքովս, իմ **խէչէրովս** ըսպաննած ըլլալուս համար թուրք կառավարութիւնը երեսուն եւ մէկ անմեղ հայեր

բանտարկած էր զանոնք անլուր զրկանք-
ներու ենթարկելով:

Մէկզմէկէ տխուր, մէկզմէկէ ահաւոր եւ
զիրար գերազանցող ոճիրներու եւ հարրս-
տահարութեանց առջեւ հայ ժողովուրդը
չուարած դարմանի մը եւ փրկութեան մը
կ'սպասէր: Մուշ, Մուշի դաշտ, Ախլաթ եւ
մինչեւ Պուլանըղ 3700 ստորագրութեամբ
պատրաստուած աղերսագիր մը Ռուսիոյ
Զարին կը մատուցանուէր Օրթոտոքս Եկե-
ղեցին ընդունելու, եթէ միայն Զարը խոս-
տանար պաշտպանել զիրենք թուրք եւ
քիւրտ հարստահարութիւններէն: Զարչա-
րանքի եւ վշտի ծանրութեան տակ հայ ժո-
ղովուրդը իր Եկեղեցիէն կը հեռանար, թո-
ղելով իրենց դարաւոր նուիրականութիւն-
ները եւ սովորութիւնները: Թուրք կառա-
վարութիւնը իր սուրդով ջնջել կ'ուզէր զա-
նոնք: Բողոքական եւ կաթոլիկ միսիօնար-
ները անտարբեր Հայ ցաւին, Հայ սուգին ու
կսկիծին ձրի Սբ. Գիրքեր կը բաժնէին Աւե-
տարանին մխիթարանքը եւ խոստացուած
արքայութիւնը քարոզելով այն գեղջուկին
որ առ հարիւր 80ը ոչ կարդալ եւ ոչ ալ գրել
գիտէր:

Ռուս հիւպատոս Ումանսքին հայ գիւղերը կը շրջէր եւ թուրք ու քիւրտ ժողովուրդներէն գործադրուած նախճիրներուն պատմութիւնները կը հաւաքէր: Մեր լսածին նայելով Անգլիական հիւպատոսն ալ ուզած է լսել հայ գեղջուկէն այդ ոճիրներուն պատմութիւնները, սակայն եւ այնպէս անոնք մերժած են առարկելով թէ «Դուք անգլիացիներդ միշտ մեզ խարեցիք եւ մենք այլեւս ռուս վստահութիւն չունինք ձեր վրայ»:

Այս բոլոր տխուր դէպքերը իրենց յուսահատական կողմերով, այլեւս չէին կրնար անտարբեր եւ անփոյթ պահել մե՞զ: Պէտք էր գործի սկսիլ, պէտք էր ուժեղ գործ մը կատարել, ցնցելու համար թուրք բարձրագոյն մարմինները եւ օտար դեսպանները, բարենորոգում մը եւ դարման մը ձեռք բերելու այս տառապած ու հարստահարուած խաղաղիկ ժողովուրդին համար: Պէտք էր ցոյց տալ թուրք եւ քիւրտ ժողովուրդին թէ Հայ բազուկը գիտէ հրացան բռնել, Հայ սիրտը գիտէ կռուիլ եւ պաշտպան կանգնել իր իրաւունքներուն: Այս ամէնն պէտք է ի յայտ բերէին «ափ մը ճան ֆէտայիներ» որոնք ուխտած էին զոհուիլ Ազգին ազատութեան

սիրոյն, արդարացնելով այն մեծ հաւատքն
ու յոյսը որ ժողովուրդը կեդրոնացուցած էր
իրենց վրայ:

* * *

Թուրք կառավարութիւնը բացի Մուշ
քաղաքէն քսան եւ ութը տեղերու վրայ
թուրք կանոնաւոր զինուորներ տեղաւորած
էր նայելով գիւղերուն դիրքին եւ մեծու-
թեան: Ամէն հայ գիւղի մէջ կառավարու-
թեան կողմէ նշանակուած էին պահապան
քիւրտեր հսկելու եւ պաշտպանելու համա՞ր
գիւղը գիշերային ունէ քրտական յարձա-
կումներու դէմ: Գիւղացին պարտաւոր էր
լիովին վճարել այդ գիշերապահ-պահապան
քիւրտերուն անտրտունջ ու անձայն: Այս
քիւրտ պահապանները կառավարութեան
կողմէ խաղցուած ճարտար խաղ մըն էր:
Անոնց նպատակն էր այդ պահապաններուն
միջոցաւ տեղեկանալ մեր մուտքը հայ գիւ-
ղերուն մէջ: Այս պահապանները պէտք է
լրտեսէին եւ հետեւէին մեզի: Եթէ պատա-
հէր որ մենք գիշեր ատեն գիւղը իջնէինք,
չուններու ձայներէն մեր մուտքը իմանալով

խկոյն լուր տալու էին Մուշ կամ պահակ դրուած թրքական այն կեդրոնները մեզ հալածելու եւ պաշարելու: Այս քիւրտ պահականներէն շատ շատեր հեռացան իրենց պաշտօններէն մեր սպառնալիքներէն վախցած:

Ամէն կողմերէ փակուած էին մեր անցքերը: Արգելքի եւ դժուարութեանց կը մատնուէին մեր բոլոր ձեռնարկները: Ժողովուրդը կը հիւժէր ցաւի ծանրութեան տակ եւ մենք մեր ձեռնարկները չէինք կրնար գործադրել, ուստի խորհեցայ ցոյց մը կատարել թուրք կառավարութեան ուշադրութիւնը մեր վրայ հրաւիրելով: Պէտք էր կոուիլ եւ արիւնը արիւնով փակել: Պէտք էր սարսափի մատնել թուրքն ու քիւրտը իրենց որջերուն մէջ իսկ, հանգիստի խաղաղիկ պահ մը տալով հայ ժողովուրդին:

Բաց դաշտի մը վրայ կամ սարալանջի մը վերեւ մղուած կոիւր ուշադրութեան առարկայ պիտի չըլլար ցնցելու թուրք, քիւրտ ժողովուրդները բարձրագոյն մարմիններու հետ, պէտք էր կեդրոնանալ ուշագրաւ վայրի մը մէջ եւ հոն հրաւիրել թուրք զինուորն ու քիւրտը:

Սբ. Կարապետի վանքը իր դիրքով ան-
 յարմար էր: Սբ. Յովհաննու վանքը նոյնպէս
 աննպաստ էր, Սբ. Առաքելոց վանքը՝ որուն
Թարգմանչաց վանք ալ կ'ըսուէր, ամէնէն
 յարմարագոյնն էր: Մտքիս մէջ այս որոշումը
 տալէ վերջ պարզեցի իմ բոլոր տեսութիւն-
 ներս: Բոլոր դժուարութիւնները աչքի առջե-
 ունենալով հանդերձ տղայքը ուրախու-
 թեամբ ընդունեցին իմ առաջարկս կոուիլ՝
 հայ ժողովուրդին բարօրութեան համար՝
 դիմագրաւելու համար մահը կամ յաղթա-
 նակը:

ԱՌԱՔԵԼՈՅ ՎԱՆՔԸ

Առաքելոց վանքը մօտաւորապէս 1600-
 1700 տարուան պատկառելի հաստատու-
 թիւն մըն էր: Մեր նախահայրերը իրենց
 տուներէն փառաւոր, իրենց ամրոցներէն
 աւելի ամրապինդ ու գեղեցիկ հոյակապ
 վանքեր կանգնած էին: Առաքելոց Վանքը
 մի գուցէ **Սբ. Աղբէրիկէն** վերջ հաստա-
 տուած առաջին վանքն է, ուր մեր նախա-
 հայրերը իրենց յուսահատ եւ ուրախ օրե-
 րուն յառած են իրենց աչքերը հոն հաւատքի

եւ յոյսի հետ: Հոս այդ նուիրական հաս-
տատութեան մէջ նոր գոյամարտ մը պիտի
մղէինք ցեղին բարօրութեան եւ խաղաղիկ
կեանքին համար:

Առաքելոց վանքը Մուշ քաղաքէն մէկ ու
կէս ժամ արեւելեան հարաւ լեռան մը տա-
փարակ գետնին վրայ կը կենայ, վեց **էլքը***
տարածութեամբ՝ սիրուն ծառաստաններով
ու այգիներով շրջապատուած: Երբ մեր աչ-
քերը դէպի արեւելք յառենք 120 քայլի վրայ
կը տեսնենք Աստուածածնի Աշտարակը,
խակ արեւմուտք՝ վանքի այգին, հարաւ՝ իր
գոմը եւ մարագը: Իր քովիկն են Իշխանաց
եւ Թաղէոս Առաքեալի աղբիւրները: Դէպի
հարաւ Սասուն տանող ճամբան եւ Ծիրին
կատարն է Կունթիկ Կորէկի Աղբիւրին հետ:

Առաքելոց վանքը շրջապատուած է մէկ
քանի հայկական գիւղերով: Վանքին անմի-
ջապէս ստորոտը կէս ժամ հեռուն **Արախ**
կոչուած հայկական գիւղն է, ժամ մը հեռա-
ւորութիւն չունին **Հաւատորիկ** եւ **Բերդակ**
գիւղերը: Ժամ մը հեռավորութեան վրայ
Տէրքէ վանքն է, ժամ մը կարճ ճամբայով
Մոկունքը, ժամ մը լեռնային ճանապարհով

* Կամ 273,360 քառակուսի ոտք:

**Մուշ քաղաքը: Մուշ եւ վանքը բաժնող լեռը
Խեւ Յովհաննէսի Քարերն են:**

Հաստատուն եւ բարձր պարիսպ մը կը
չըջապատէ վանքը: Երկու դռներ ունի, ո-
րոնցմէ մէկը փոքր, իսկ միւսը երկփեղկանի
կամարաձեւ մեծ երկաթապատ դամբրով
ծածկուած դուռ մըն է, վեց մէթր բարձր,
վեց մէթր երկայն եւ հինգ մէթր խորունկ:

Վանքը ունէր իր սեփական ջաղացքնե-
րը, այգիները, հողերը, կովերը, եզները եւ
ոչխարները: Ուխտաւորներուն համար շի-
նուած էին մօտաւորապէս քառասուն սե-
նեակներ: Վանքին հոգածութիւնը եւ հսկո-
ղութիւնը յանձնուած էր վանահայր Յով-
հաննէս Վարդապետին: Յովհ. Վարդապետ
բարի, ջերմեռանդ եւ առաքինի յատկու-
թիւններով օժտուած կղերական մըն էր: Իր
հոգածութեան տակ էին 60—70 որբեր որոնց
կը դասաւանդէր ուսուցիչ-վարպետ մը Հա-
յերէն լեզուն, կրօնը եւ կը սորվեցնէր ար-
հեստներ: Վանքը իր ուսուցիչներով, կղեր-
ներով, տնտեսներով, հովիւներով ընդա-
մէնն 80 հոգի էին: Մենք հոս այս վանքին
մէջ էր որ պիտի ամրանայինք ու կռուէինք
թուրք զինուորին դէմ:

ԴԵՊԻ ՎԱՆՔ

Ժամանակ չկար, պէտք էր այլևս գործի սկսէինք կառավարութեան ուշադրութիւնը մեր վրայ հրաւիրելով: Քանի մը գիւղերու մէջ բնակող ծանօթ երիտասարդներուն ձայն կուտանք որ գան եւ մեզի միանան: Կ'ուզենք որ մեր կազմակերպած եւ աչքի զարնող տղայքները, մօտաւորապէս երկու հարիւր հոգի, վանք բերենք իրենց **չախմախլի** եւ **էվզէլի** հրացաններով մէկտեղ: Մեր նպատակն էր այս շարժումը յեղափոխական գոյնով չի ներկել սոսկ, այլ այդ շարժումին ժողովրդական գոյն տալ:

Մեր ունեցած կանոնաւոր զէնքերը **միայն 37** հատ էին: Այս զէնքերով էր որ պիտի կռուէինք թուրք արդիական բազմաթիւ հրացաններուն եւ թնդանօթներուն դէմ: Ցեղին չարչարանքը եւ գործադրուած անարդարութիւնները մեր մէջ վրէժը լեռնացուցած էին այլևս արիւնը արիւնով ներկելու եւ արցունքը արցունքով ծածկելու հա-

մար: Երբ կը պատրաստուէինք վանք գալ,
յանկարծ Մուշի դաշտի **Ջրիկ** գիւղացի Համ-
բարձում անունով զինուորը հիւանդացաւ:
Օձէն թէ կարիճէն խայթուած էր, չենք գի-
տեր: Մէկ երկու օրուան մէջ ոտքին միսերը
ամբողջովին թափան, այնպէս որ ոտքին
ջիղերը եւ երակները կ'երեւէին: Մեր ունե-
ցած բոլոր բժշկական միջոցները գործադ-
րեցինք բայց ի զուր: Յայտնի էր որ մահը
այլեւս մէկ քանի օրերու հարց էր: **Չէինք**
կրնար սպասել եւ ձգձգել մեր նպատակը:
Պէտք էր ժամ առաջ վանք երթալ եւ կար-
գադրել ամէն բան պաշարուելէ եւ թուրք
կառավարութեան կասկած ներշնչելէ ա-
ռաջ: Համբարձումը Յարութիւնին եւ անոր
չորս ընկերներուն խնամքին յանձնելէ վերջ
համբուրեցինք զինք եւ մենք դէպի վանք
ուղղուեցանք: Պատուիրեցի Յարութիւնին
թէ՛ երբ վանք գալու ըլլաս, հետդ պէտք է
բերես փամփուշտ լեցնելիք բոլոր գործիք-
ները, վառօդը 20,000 գնդակներ, 20,000
քարսօլներ, անգլիական վառօղներ եւ **չախ-
մախլի** հրացանին վառօղները: Խոստացայ
Յարութիւնին օրը օրին տեղեկագրել իրեն
բոլոր անցուդարձերը վանք հասնելէս վերջ:

Հոկտեմբերի վերջերը եւ Նոյեմբերի սկիզբները երեսուն ընկերներով Առաքելոց Վանքը հասանք: Մեզի ընկերացան եւ մեր ձայնին պատասխանեցին միմիայն **Ցրոնք** գիւղէն 8-10 տղայքներ, միւսները չի կրցան միանալ, որովհետեւ վանքը պաշարուած էր թուրք զինուորներէն:

Տենդոտ ու սովորականէն շատ տարրեր գործունէութիւն մը կար մեր մէջ: Վանահայր Յովհ. Վարդապետը իրազեկ չէր մեր նպատակին, բայց հակառակ մեր կծու եւ ծանր վարմունքին՝ ան հիւրասիրեց մեզ սովորականին պէս իր կարելին ընելով: Ծանր պահանջներով եւ սրտնեղած սրտով Մուշ կը դրկէի զայն որ երթար եւ հոն մնար, քանզի չէի ուզեր որ վանահայրը ռեւէ պատասխանատուութիւն ունենար թուրք կառավարութեան առջեւ:

Յարութիւնը **Կէլիկուզանէն** վանք բերելու համար մարդ ղրկեցինք, քանզի եթէ ան մէկ երկու օր ալ ուշանար մենք մի գուցէ կը պաշարուէինք եւ ինք իր ընկերներով դուրսը մնար: Այն մարդիկը որոնք Յարութիւնին ետեւ ղրկեցի ցոյց տուի անոնց այն ճամբան

որ ապահով էր եւ զերծ պիտի մնային եթէ այդ ճամբայով երթային, ձիան հիւսերէն եւ փութէն ու քամիէն: Կէս ժամ շուտ հասնելու մարմաջէ տարուած իմ պատուէրիս հակառակ լեռնային ճամբայէն անցնիլ փորձած են, ձիան հիւս մը եկած եւ անցած է անոնց վրայէն առանց վնասելու իրենց: Անոնք այլայլած ու վախցած վերադարձան ու պատմեցին դէպքը, իրենց երկու հրացաններն ալ հոն ձիան հիւսին տակ թողելով: Իսկոյն 150 մարդ գիւղերէն հանեցի հրացանները փնտռելու: Երկար փնտռտութէ վերջ չի կրցան գտնել, մինչեւ որ գարնան արեւը ձիւնը հալեցուց եւ Սասունցիք զրտնելով հրացանները բերին եւ ինծի յանձնեցին:

Այդ օր Յարութիւնէն նամակ մը եկաւ. ան կը գրէր թէ Համբարձումը մեռաւ, թաղեցինք զայն, բայց Սպահանաց Ռէիս Մակարին տղան մեր գինուորներէն մէկուն հրացանը գողցած է, կ'ուզեմ հրացանը գտնել եւ յետոյ գալ:

Առանց ժամանակ կորսնցնելու հետեւեալ նամակը գրեցինք եւ ղրկեցինք:

Սիրելի Յարութիւն,

Անմիջապէս ճամբայ ինկիր, հաւանական է որ պաշարուինք: Աճապարէ որ վանք հասնիս դեռ չի պաշարուած: Վաղուրնէ սկսեալ վանքէն ժամ մը հեռուն Միրին կատարի քով գտնուած աղբիւրին մօտ երկու զինուորներ պիտի մնան ամէն գիշեր մինչեւ քու գալդ: Եթէ տեսնես թէ այդ աղբիւրին քով զինուորներ չկան ըսել է թէ չեմ կրցեր դրկել եւ մենք պաշարուած ենք: Մեր ծածկագիրը (փարօլան) քեզի ծանօթ է: Պէտք է իջնես **Խորոտ Խանընով** Արապօի Արծիւի Քարերը, **փարօլան** պոռալով կրակ բանաս թշնամիին վրայ: Վանքին փոքրը դրան առջեւ ձեզի համար շատ գեղեցիկ դիրքեր չինած ենք, մենք ներսէն դուք ալ դրսէն զարնելով թշնամիին կը յուսանք թէ ապահով ներս կ'առնենք ձեզ: Հակառակ պարագային եթէ չի կարողանանք ձեզ ներս առնել, ետ կը դառնաք դէպի Սասուն լոյսը չի բացուած, իսկ եթէ մենք վանքի պատերուն տակ իյնանք դուք մեր գործը շարունակեցէք: Բոլոր ընկերներդ կը համբուրեն ձեզ:

ԱՆԴՐԱՆԻԿ

ԽՈՒՉԱՐԿՈՒԹԻՒՆ ՄԸ

1901 Նոյ. 3ի Շարաթ օրն էր: Մենք մեր առաջին գործը ըրինք Մուշէն ռազմանիւթ եւ դաշտէն ալ տղայքներ բերել տալ եւ վանքի պատերուն տակ արհեստական պատնէշներ եւ դիրքեր շինել: Կէսօրը հազիւ անցած էր երբ մէկէն փողի (պօռօզանի) մը ձայնը լսելի եղաւ: Երբ փողին ձայնը կը տրեցաւ, իսկոյն տասնեւվեց զինուորներ երեւցան: Երբ բաւական մօտեցան տեսանք թէ հարիւրապետ մը ձին հեծած՝ կանոնաւոր զինուորներու հետ դէպի վանք կը յառաջանար: Այս որ տեսայ իսկոյն պոռացի. «Գէորգ, Վաղարշակ, Հաճի, վանքին դռները փակեցէք, կղպեցէք եւ բանալիները ինծի բերէք, պէտք եղած տեղերը պահապաններ դրէք եւ դիրքերուն լաւ հսկեցէք»:

Երբ թրքական այս փոքր խումբը դէպի վանքին մեծ դուռը կը յառաջանար, **Հաւատորիկ** գիւղէն փողի ուրիշ ձայն մը կը հնչէր, ուրիշ մըն ալ **Բերդակէն** անոնց նշան կուտար եւ կը պատասխանէր փողի ձայնին:

Միամիտ երեւոյթով, սակայն կասկածոտ եւ իբր թէ անտարբեր փողերու ձայներէն վանքի մեծ դրան առջեւ հասան: Երբ վանքին երկփեղկանի մեծ դուռը փակ գտան խումբին մէջէն մէկը սկսաւ բարձրաձայն պոռալ:

«Վարպե՛տ, վարպե՛տ, զարմանք, ինչո՞ւ վանքին դռները փակած էք»:

«Վարպե՛տ, մտիկ ըրէ ինձի, ինչ որ քեզի ըսեմ այն պէտք է խօսիս, ուրիշ ոչինչ, հասկցա՛ր»:

«Այո՛ փաշա, հասկցայ»:

«Անցեալ օր երեսուն հատ զինուած ոստիկաններ եւ քիւրտեր եկան, հրացանաձգութիւն ըրին, որբերը վախցան, ուստի այդ օրէն ի վեր Մուշի Առաջնորդէն հրաման եղաւ որ ռեէ զինուած մարդու առջեւ դրոները չի բանանք»:

«Հա՛, այդպէ՞ս է, մենք ալ թագաւորին զաւակներն ենք, որբերն ալ, մենք քիւրտ չենք, մեր հարիւրապետը վանք եկած է եւ կը փափաքի վանքը պտտիլ»:

«Այո՛, շատ կը ցաւինք, բայց հրամանը այդպէս է, մենք զինուած մարդու առջեւ դռները չենք կրնար բանալ»:

«Կարելի՞ է կարպետ մը տալ մեզի, մեր հարիւրապետին համար»:

«Նետեցէք կարպետ մը, ըսի»: Կարպետը գետինը փռեցին եւ հարիւրապետը վրան նստաւ: Փսփսուք մը ինկաւ մէջերնին: Այս ատեն հրամայեցի որ վանքին փոքր դուռը բանան եւ ձգեն որ հարիւրապետը եւ տասնեւվեց զինուորները անարգել ներս մտնեն: Երբ անոնք ներս մտնեն իսկոյն օդին մէջ կրակելով անոնց հրացանները կը գրաւենք: Այս դէպքերը վայրկենական կերպով կուզային մեր մտքին մէջ եւ կայծակի արագութեամբ կը հասնէին իրարու, իմ, Վաղարշակին, Հաճի Յակոբին եւ Գէորգին մէջ: Գէորգ եւ Հաճի Յակոբ առարկեցին թէ Յարութիւնը դուրսն է իր ընկերներուն հետ: Զուգեցի անոնց սիրտը կոտրել, ուստի համակերպեցայ:

Քառորդ ժամ նստելէ վերջ թուրք զինուորները եւ հարիւրապետը մեկնեցան: Երբ Աստուածածնի Աշտարակին 100 քայլ մօտեցած էին՝ թրքական փողերը դարձեալ սկսան հնչել, արձագանգելով վանքի պատերուն եւ լեռներուն: Այս փողի ձայներուն պատասխանեցին Բերդակի, Արախի եւ Հա-

ւատորիկի մէջ նստած թուրք զինուորներու փողերը:

Նոյ. 4ի Կիրակի օրն էր: Այլեւս բացարձակապէս թուրք կառավարութեան յայտնի էր որ մենք վանքին մէջ էինք: Կառավարութիւնը նոր դժուարութիւններու եւ նոր խօսքերու տեղի չի տալու համար աչքը կը գոցէր որ մենք ելլէինք եւ հեռանայինք, բայց մենք հոն էինք մեր ուխտին ու մեր որոշումին փարած, քանզի մեր աչքերուն առջեւ կը տեսնէինք չարչրկուած ժողովուրդին տխուր պատկերը արցունքով եւ արիւնով շաղուած:

ԻՐԱՐԱՆՑՈՒՄ ՄԸ

Նոյ. 5ի Երկուշաբթի առաւօտն էր: Վանքին լուսարարը Սահակ Խեւ Յովհաննէսի Քարերէն հեւաշունչ դէպի վանք կը վազէր, երբ այս տեսայ Գէորգին ձայն տուի: Գէորգը գնաց դիմաւորելու Սահակը եւ իր այլայլումին պատճառները հասկնալու:

«Ի՞նչ կայ Սահակ, ինչո՞ւ շունչդ կտրած է, ի՞նչ պատահած է Մուշ քաղաքին»:

«Բան մը պատահած չէ, բան չկայ, կարծեմ որբերը այս տեղէն Մուշ պիտի փոխադրեն»:

Գէորգը եկաւ եւ պատմեց լուսարարին պատասխանը: Այդ բացատրութիւնը զիս չի գոհացուց: Քիչ վերջ տեսայ թէ լուսարարը եւ վարպետ-վարժապետը գորգի հորերը կը քանդեն, գործիքները կը կապեն, որպէս զի ուսուցիչ եւ որբեր վանքէն դուրս գան:

Այս իրարանցումը տեսնելով, ջղայնուտած եւ զրգոուած վարպետը քովս կանչեցի եւ տարի զայն Սբ. Գէորգի մատուռը երդուրնցնելու համար:

«Ի՞նչ ըսաւ լուսարար Սահակը քեզի Մուշէն դարձին, ի՞նչ լսեցիր որ հորերը կը քակես եւ որբերը Մուշ կ'ուզես տանիլ»:

Վարժապետը դողդող ու գունատ դէմքով մը սկսաւ կմկմալ, «Պատրիարքարանէն լուր եկած է որ անմիջապէս որբերը Մուշ փոխադրեմ»:

Այս խօսքերը ինձի ոչ գոհացում եւ ոչ ալ բաւարարութիւն չի տուին, ուստի քիչ մը բարկացած ձայնով ըսի, «Վարպետ չիտակը ըսէ, թէ ոչ բոլորը ըսել պիտի տամ»: Երբ կմկմալ սկսաւ եւ տհաճ դէմք մը առաւ,

իսկոյն մէջքէս խէնչէրս դուրս քաշեցի եւ սպառնացայ որ ճիշտը խօսի, երբ այս տեսաւ սարսափահար պոռաց.

«Կեցի՛ր փաշա, կեցի՛ր, կեցի՛ր, կ'ըսեմ իրողութիւնը: Թուրքերը գիտեն թէ դուն քու տղայքներուդ հետ հոս ես, ուստի զինուոր եւ թնդանօթ պիտի քաշեն վանքին վրայ: Ռուսիոյ հիւպատոսը առարկած է թուրք կառավարութեան թէ, այդ վանքին մէջ որբեր կան եւ անոնք անմեղ են, եւ թէ այդ վանքը ոչ միայն Հայերուն կը պատկանի, այլ ամբողջ քրիստոնեայ ազգերուն, որովհետեւ վանքին գմբէթին վերեւ խաչ է որ կը փայլի: Սոսրով վրդ. Պէհրիկեան եւ վանահայր Յովհաննէս վրդ. լուր դրկած են որ որբերը Մուշ փոխադրեմ»:

«Տեսա՛ր, հիմա շիտակը խօսեցար, ուստի գնա»:

Երթեւեկութիւնը այլեւս դադրած էր Մուշի եւ Առաքելոց վանքին միջեւ: Վանահայրը Մուշ մնացած էր, իսկ որբերը եւ վանքին աշխատաւորները փակուած էին վանքին մէջ: Վանքին տնտես մայրիկը որ 80 տարեկան ծերունի կին մըն էր, քովս կանչեցի. «Մայրիկ այս մարդոց հետ գացէք եւ

տեսէք թէ վանքին մէջ ո՞րչափ ալիւր, հաց, միս, կորկոտ կայ, լուր մը բերէք ինծի»:

Լուր բերին թէ վանքին մէջ գտնուած պաշարը մէկ ամսուան բաւարարութիւն միայն կրնայ տալ:

«Տղերք, Հաւանական է որ վանքին ջուրը կտրեն, ուստի բոլոր Միաբանութիւնը եւ դուք ջուրերով լեցուցէք գինիի կարասները եւ Մատաղի կաթսաները, որպէս զի առատ ջուր ունենանք: Զուր լեցուցին բոլոր կարասներու մէջ, եւ ամէն բան իր կարգին մէջ էր. սակայն եւ այնպէս Յարութիւնը իր ընկերներուն հետ չեկաւ:

ՆՈՐ ՓՈՐՁ Մ՛ԱԼ

Վանքը հին օրերէն մնացած երկու խոշոր չախմախլի հրացաններ ունէր: Այդ հրացանները ներկայ մահկանացուներս չէինք կրնար գործածել, զանոնք մաքրել եւ խղել տուի: Երբ ամէն օր իրիկուան ժամը մէկը կ'ըլլար, կրակել կուտայի քաջալերելու համար թէ տղայքը եւ թէ դաշտի հայ ժողովուրդը: Այս հրացաններուն ձայնը թնդանօթի ձայնէն պակաս չէր:

Շարաթ, Կիրակի եւ Երկուշաբթի օրերը դարձեալ մեզի պատեհուածին տրուեցաւ որ վանքէն դուրս գանք եւ հեռանանք, բայց մենք դարձեալ հոն էինք մեր նպատակին աւելի փարած:

Չորեքշաբթի Նոյ. 7ի կէսօրէն վերջ ժամը 7ն էր: Վանքին հովիւները լուր բերին թէ երեք տարբեր տեղերէ թուրք կանոնաւոր հազարաւոր զինուորներ դէպի վանք կը յառաջանան: Մենք մեր տեղէն այդ զինուորներուն գալը չէինք տեսներ, որովհետեւ լեռները արգելք էին մեզի: Ճիշտ այս ատեն էր որ վանքին կարաւանը Բէրդակէն դէպի վանք կուգար ալիւրով բեռնաւորուած: Հազիւ կրցանք զանոնք ներս առնել կովերուն հետ եւ դռները փակել: Զինուորներուս մէկ մասը տակաւին անտեղեակ էր մեր նպատակէն, ուստի երբ անոնք տեսան թուրք զինուորները պոռացին. «Փաշա՛, փաշա՛, ելիր որ ետեւի լեռան վրայ դիրք բռնենք»:

«Առաջքէն եկողին մի՛ նայիք, նայեցէք ետեւը, Ծիրին կատարը, տեսէք ի՞նչ մեծ բազմութիւն լեցուած է հոն: Անոնք կ'ուզեն որ մենք դուրս գանք, մենք հոս պիտի կռուինք եւ հոս պիտի մեռնինք»:

Երկու հարիւր քայլի վրայ թուրք զինուորներու **Փէսերը** սկսան երեւիլ: Այս զինուորները դէպի մեզ կը քալէին, վարանոտ եւ երկիւղած: Երբ տեսան թէ մեր կողմէն կրակ չի բացուիր՝ սկսան շրջիլ հոս ու հոն: Հայութենէ իսլամ կրօնը ընդունած հայ մը որ Մահմէտ էֆ. կը կոչուէր, պոռաց.

«Մէ՛հէ՛ աղա՛»:

Մէհէ աղան յայտնի Մէ՛հէ՛ չափուչն էր որ քսան զինուորներու հետ Մահմէտ էֆ.ին ընկերացած յառաջ սկսան գալ: Երբ վանքի մեծ դրան մօտեցան, միւս զինուորներն ալ հետեւեցան անոնց եւ եկան կեցան վանքի գոմին մէջտեղ գտնուած **մեծ կալը**:

Այդ ատեն Մահմէտ էֆէնտին սկսաւ պոռալ.

«Վարպե՛տ, վարպե՛տ, ես հայութենէ իսլամ դարձած Մահմէտ էֆէնտին եմ, քովինս ալ Մէ՛հէ՛ չափուչն է, ի՞նչ կայ, ի՞նչ եղած է որ վանքին դռները փակած էք»:

Երբ Մէ՛հէ՛ չափուչին հոն կենալը լսեցին վանքի Միաբանութիւնը եւ որբերը, ըսին. «Փաշա՛ դաժան եւ արիւնարբու Մէհէհէ՛ն է, Մէհէհէ՛ն է»:

Մէհէ՛ չափուչ հայ ժողովուրդի գլխին պատուհաս մը եղած էր, ես լսած էի անոր անգթութիւններուն շուրջ, երբ անոր հոն կենալը գիտցայ, իսկոյն արիւնը գլուխս խուժեց: Կանչեցի Գէորգը, Վաղարշակը եւ Հաճին ու ըսի. «Երբ զանգակին ձայնը լսէք իսկոյն կրակեցէք, մեր կրակի ձայները Յարութիւնն ալ կը լսէ եւ զգոյշ կ'ըլլայ»:

Դարձեալ Հաճի Յակոբ եւ Գէորգ վիզս փաթթուեցան եւ ըսին թէ Յարութիւնը դուրսն է, թէ թող նախայարձակը մենք չըլլանք աւելի գրգռելու թուրք կառավարութիւնը մեր վրայ թնդանօթներ բերելու»:

«Ես թնդանօթներուն եւ բոլոր դժուարութիւններուն մասին նախապէս խօսեցայ ձեզի, հոս լեռնային թնդանօթ միայն պիտի կրնան բերել եւ այն ալ մեզի պիտի չտայ այն վնասը որ իրենք կը խորհին հասցնել մեզ»:

Դարձեալ տեղի տուի անոնց խնդրանքին հետեւելով դուրսի անցուղարձերուն:

Վարժապետը կեցած էր դրան ետեւ: Ես կը խօսէի ցած ձայնով վարժապետին եւ ան ալ բարձր ձայնով մը կը պատասխանէր Մահմէտ էֆէնտիին:

«Այս ի՞նչ զինուորներ են, այս ի՞նչ սպառնալիքներ են, հոս օտար մարդ չկայ, բոլոր որբերը վախէն հիւանդացեր են»:

Այս խօսքերուն վրայ Մէհէ եւ Մահմէտ էֆ. իրենց հետ գտնուած զինուորները առած ետ դարձան դէպի գոմին ետեւ Իշխանաց Աղբիւրը եւ Աստուածածնի Աշտարակը:

Թուրք զինուորները իրենց դիրքերուն ետեւ քաշուեցան, իսկ Մէհէ՛ եւ իր ընկեր զինուորները Աստուածածնի մատուռին պատը ծակեցին եւ ներս մտան:

* * *

Մեր թշնամին շուարեցնելու եւ մեր ուժերուն մասին որոշ գաղափար մը չի տալու համար իւրաքանչիւր զինուորի համար երեք տարբեր դիրքեր շինած էինք: Պէտք էր որ անոնք մէկ դիրքէն զարնէին եւ միւսին անցնէին, ընդդիմադրի մեծ ուժի մը գաղափարը տալու:

Այդ տարին տակաւին մենք ուսական մօսին չունէինք, 1877ին գործածուած ուսական պէրտանգանիներ էին մեր զինուորներուն ձեռքը գտնուածները միակ իմս մօսին մաւզէր էր:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՂԱԶԱՐ ԿԸ ՎԻՐԱԻՈՐՈՒՄ

Մենք կը խորհէինք թէ թուրք զինուորները անպատճառ յարձակում կը գործէին, բայց այդ օր ալ խաղաղ անցաւ:

Ժամը Յին Ը. Թ. վարպետ-վարժապետին սենեակը նստած կը խօսէինք, երբ վարպետը խօսակցութիւնը փոխելով ըսաւ. «Փաշա, քանի մը անգամներ մահուանէ ազատած եմ, արդեօք այս անգամ ալ պիտի ազատի՞մ:

«Այո, պիտի ազատիս»:

«Փաշա թէյ մը կը խմե՞ս»:

«Այո, կը խմեմ»:

Հազիւ թէյին գաւաթը ձեռքս առած էի, յանկարծ հրացանի մը ձայնը լսեցի: Եկած հրացանի ձայնը մեր հրացաններուն ձայնն

էր: Գաւաթը անմիջապէս ձեռքէս ձգեցի եւ պոռացի մեր տղոց որ խիստ կրակ բանան Թաղէոս Առաքեալի առուի ծառերուն վրայ: Այս ատեն Յարութիւնին ձայնը լսեցի որ կը պոռար. «Փաշա՛, զարկէք գոմի եւ Թաղէոս Առաքեալի աղբիւրին կողմը ծառերուն մէջ, մեզ վառեցին»:

Յարութիւնը Համբարձունը թաղելէ վերջ Չէթօի, Ղազարի, Եղօի եւ քանի մը շալակաւորներու հետ վանք եկած էր: Մեր խիստ կրակին տակ Յարութիւնը կրցաւ շալակաւոր ընկերներուն հետ վանքին դրան առջեւ գալ: Երբ դուռը բացինք եւ ներս առինք զանոնք տեսանք թէ Յարութիւնը իր վերի սրունքէն վիրաւորուած էր:

Կէլիկուզան գիւղացի Խաչօին զաւակը Ղազար վիրաւորուած ինկած էր գոմին ետեւ 150 քայլի վրայ: Ղազար դրսէն շարունակ կը պոռար. «Փաշա՛, փաշա, ճիժերուն ըսի, զարկէք հրացան մը գլխուս, չի զարկին եւ զիս հոս թողուցին, չեմ կրնար քալել»: Կը մտածէի եթէ դուրս հանեմ 8-10 տղայքներ, մէկը ազատելու տեղ ուրիշներ ալ պիտի վտանգեմ, ուստի, պոռացի. «Չէ՞ որ դուն Մէյրօի – Մարիամին – տղան ես,

չէ՞ դուն քու աղբարներուդ արիւնը կը կրես
երակներուդ մէջ, կտրիճ եղիր եւ օձի պէս
սողա եկուր, շան պէս փախեր են թուրք
զինուորները»:

Մեր կրակէն թշնամին ահարեկած փա-
խած էր: Այս քաջալերանքիս վրայ Ղազար
դէպի մեզ շարժեցաւ եւ եկաւ թաղէոս
Առաքեալի աղբիւրի ջուրին վրայ ինկաւ եւ
սկսաւ ջուր խմել: Մենք մեր դիրքէն կըր-
նայինք տեսնել Ղազարը: Ոտքի ելաւ եւ
սկսաւ քալել դէպի մեզ: Գոմին մէջ պա-
հուած թուրք զինուորները դուրս եկան որ
Ղազարը բռնեն: Մենք ուշի ուշով կը հետե-
ւէինք Ղազարին, երբ այս տեսանք՝ թուրք
զինուորներու վրայ խիստ կրակ բացինք:
Մեր կրակին տակ թուրք զինուորները դէպի
գոմը փախան եւ Ղազար եկաւ հասաւ մեր
մօտ: Ղազարին գլուխը թեւերուս մէջ առի
եւ գգուեցի զայն: Զախ թեւին ոսկորը կտտ-
րած էր:

«Ղազար մի՛ վախնար, Աւօն կը բժշկէ
քեզ»:

Բայց երբ Ղազարին **իշխկը** հանեցինք
պառկեցնելու, տեսայ թէ ձախ կողէն ալ
վիրաւորուած էր եւ ճերմակ իւղի կտոր մը
դուրս ինկած էր:

Ղազարին վիճակը շատ ծանր էր: Տասը վայրկեանի չափ թեւերուս մէջ մնաց եւ շարունակ ջո՛ւր ջուր կ'ուզէր:

«Ղազար ի՞նչ կ'ուզես, ըսէ ինծի»:

«Փաշա իմ կողմէս մօրս եւ եղբայրներուս ձեռքերը համբուրէ, կարծեմ սխալ մը չի գործեցի այս ճամբուն մէջ իյնալուս համար»: Փայտէ շերեփով ջուր խմցուցի ու այլեւս չկրցաւ խօսիլ:

Յարութիւնին քով գացի, տեսայ թէ անոր վէրքն ալ ծանր էր: Իր վերի սրունքէն վիրաւորուած էր եւ վէրքը երեսուն սանդիմէթր երկար բացուածք մը ունէր:

Յարութիւն այնքան քաջ ու յանդուզն էր որ անտեսած էր իմ պատուէրս: Ան արհամարհած էր թշնամին եւ մեզի օգնութեան եկած էր: Երբ Ծիրին կատարը կը հասնին, հոն չեն գտներ մեր տղայքները: Եթէ մենք պաշարուած չըլլայինք անպայման անոնք պիտի գտնէին մեր երկու ընկերները զիրենք դիմաւորելու համար: «Յարութի'ւն, փաշային թելադրած ճամբայով երթանք, կ'ըսեն իր ընկերները, Արծիւի եւ Արապպոյի Քարերէն, յայտնի է որ պաշարուած են»: Յա-

րութիւն առանց կարեւորութիւն տալու անոնց խօսքերուն, կ'ըսէ. «Քիչ մըն ալ երթանք եւ տեսնենք թէ ի՞նչ կայ»:

Երբ քիչ մըն ալ կը ցածնան, վանքին գմբէթը եւ զանազան կրակներ կ'երեւին այլեւայլ կէտերու վրայ: «Յարութիւն, ատոնք թուրք զինուորներու կրակներն են, եկուր փաշային պատուիրած ճամբայէն երթանք»: «Եկէք քիչ մըն ալ ցածնանք, մինչեւ **բերուտեղը**»*: Երբ հոս կը հասնին Յարութիւն կ'ըսէ. «Սարգիս եւ Ղազար դուք հետս եկէք, իսկ մնացածներդ հոտ կեցէք. կ'ուզեմ խուզարկութիւն մը կատարել եւ տեսնել թէ ի՞նչ կայ»: Յարութիւն իր երկու ընկերները առած երբ կը ցածնայ, յանկարծ ձայն մը կը լսէ:

Թուրք զինուորներուն մէջ հայերէն խօսող քիւրտեր ալ կային: Անոնք վերը բարձր լեռան վրայ հորիզոնին մէջ նշմարած էին խումբին շարժիլը, երբ մօտեցած էին իրենց, անոնք իրենց խօսքը ուղղելով Յարութիւնին ըսած էին. «Ինչո՞ւ կայնեցաք, եկէք, եկէք, բոլոր ճիժերը գոմին մէջ են»:

* **Բերուտեղը** վանքի այն մասն է, ուր ոչխարները կը բերեն հոն կ'թելու համար:

Յարութիւն անձանօթ ձայները ճանչնալով փարօլան կը պոռայ եւ սակայն պատասխան չընդունիր: «Տղայք կրակեցէք, թշնամիներ են»: Թուրք զինուորներ ալ կրակ բացած էին ճիշտ նոյն ատեն: Գոմին ետեւ գտնուած փոքր բլրակին վրայ տասնեւհինգ քարեր կային, այդ քարերուն ետեւ պահուած թուրք զինուորներու համազարկէն էր որ վիրաւորուած էին Յարութիւն եւ Ղազար:

ՀԻՒՊԱՏՈՍԸ ԿԸ ՄԵԿՆԻ ՄՈՒՇԷՆ՝

Նոյ. 7ին երբ թուրք զինուորները մեզ պաշարած էին, Անգլիացի հիւպատոսը Մուշ քաղաքը թողուցած Պիթլիս կը մեկնէր: Ռուս եւ Անգլիական հիւպատոսներուն մէջ խուլ պայքար մը սկսած է: Ռուս հիւպատոսը ամէն ջանքերով Հայ ժողովուրդը Օրթոտոքս Եկեղեցիին կապել կը ջանար, ուստի անոր յաջողութիւնները անուշ չէին գար Անգլիացի հիւպատոսին: Թուրք պաշտօնեաները եւ Ռուս հիւպատոսը կը խորհէին թէ ես իմ թելադրութիւններս եւ ուղ-

մանիւթս Անգլիական Հիւպատոսէն կ'ստանամ, ուստի ամէն գնով իրարու դէմ լեցուած էին ատելութեամբ:

* * *

Նախկին յեղափոխական Արապպոյի Հայրը ճերմակ մօրուքով 95 տարեկան յարգելի ծերունի մըն էր: Վանահայրը կը կերակրէր զայն եւ ծերուկը վանքի գոմին մէջ կը քնանար: Կոխի նախօրեակին գոմէն վանք բերի, հոն մնալու եւ թուրք զինուորներու եւ մեր գնդակներու զոհ չերթալու: Ծերունին գոմի կեանքը կը սիրէ եղեր, ուստի առանց իմ գիտակցութեանս դարձեալ վանքին գոմը գացած էր:

* * *

Նոյ. Տի առաւօտն էր: Արեւը կը փայլէր մեր գլխուն վերեւ: Ամէն բան պարզ եւ որոշ կ'երեւէր մեր շուրջը սառած գետնին վրայ եղեամով ծածկուած կարմիր Փէսեր կ'երեւէին գոմին առջեւ: Տեղ տեղ արեան կարմիր շիթեր կ'երկարէին, ուստի ձայն տուի տղա-

յոց որ լաւ հսկեն դիրքերուն: Ճարպիկ վազող տղայքները գոմը դրկեցի որ երթան եւ ֆէսերը հաւաքեն ու բերեն: Երբ տղայքները գոմը կը մտնեն, Արապպոյի հայրը գետնին վրայ պառկած կը տեսնեն:

Արապպոյի հայրը եւ ֆէսերը առած գոմէն վանք եկան: «Ափօ ինչո՞ւ գացիր գոմ, գիշերը ի՞նչ տեսար»: «Երէ փաշա, **Խօրղանս** առին, **տօշակս** առին, բոլորը արեան մէջ թաթխեցին: Եօթը հատ դիակ բերին: Թուրք զինուորներէն մին հրացանը սրտիս դրաւ որ պիտի սպաննէր զիս, կարմիր երեսով խորտիկ մարդ մը կար որ իր երեսին վրայ սպի մը ունէր, էն մարդը չի թողուց, էն մարդը օր թողնէր զիս կ'սպաննէին»:

Մենք Ափօին տուած լուրերուն համաձայն, հասկցանք որ այդ մարդը հայութենէ իսլամ դարձած Մահմէտ էֆէնտին էր:

Այդ օր աղօթարանը բացուելու մօտ Ղազար իր հոգին աւանդեց: Զանգակատան քով անոր գերեզմանը փորուեցաւ, որբերը եւ ուսուցիչները ազգային երգերով, խաչով ու խաչվառով թաղեցինք սիրելի Ղազարը: Մեր երգեցողութիւնը կը լսէին թուրք զինուորները իրենց դիրքերուն ետեւէն: Երկու

օր վերջը բնական մահով Արապպոյի հայրն
ալ մեռաւ ու մենք զայն ալ թաղեցինք:

ՄԵԾ ԿՌԻՒԻ ՆԱՌՕՐԵԻՆ

Նոյ. 12ի առաւօտն էր: Օղը սկսաւ աւելի
ցրտանալ եւ ձիւնը բարձր լեռներէն հետզ-
հետէ ցածնալով եկաւ հասաւ վանք: Մեզ
պաշարող 6000 թուրք զինուորները ձմրան
փուքէն ու ցուրտէն պաշտպանելու համար
մօտակայ հայ գիւղերէն— Բէրդակէն, Արա-
խէն, Տէրքէ վանքէն, Ալի Չոնաէն վեց հա-
րիւր լծկան եզներ բերած են իրենց ծառա-
յեցնելու եւ գետնափոր տուններ եւ դիրքեր
շինելու: Մուշէն եւ Մուշի շրջանէն հայ վար-
պետներ եւ գիւղացիներ բռնի հաւաքելով
բերուած էին այս շինութիւնը լրացնելու:
Վեց գիշերուան մէջ 196 գետնափոր տուններ
շինուած էին այլեւայլ դիրքերու վրայ: Յորեկ
ատեն աշխատանքի չէին կրնար լծել, քան-
զի անոնք պիտի վտանգուէին մեր կրակ-
ներէն, ուստի գիշերուան մութէն կ'օգտուին
միմիայն: Շինուած դիրքերը թուրք զինուոր-
ներուն հազիւ վանքի պարիսպէն 200—250
քայլ հեռու էին:

* * *

Նոյ. 12ի առաւօտ կեղծ ցոյց մը կատարեցին թուրք զինուորները: Իրենց դիրքերէն քիչ մը անդին փայտերու վրայ **Փէսեր** դրած էին: Մեր տղայքներ թուրք զուխներ կարծելով կը կրակէին անվերջ եւ ուժգին կերպով, սակայն եւ այնպէս այդ **Փէսերը** հոն էին եւ չէին իյնար: Ինծի իմաց տուին. կեղծ խաղը իսկոյն նկատեցի եւ հրամայեցի որ դադրեցնեն իրենց կրակները:

Այդ կեղծ ցոյցէն հազիւ քանի մը ժամ անցած էր մուրճի մը խուլ ու անվերջ հարուածներուն ձայնը լսելի եղաւ: Թուրք զինուորները յաջողած էին Աստուածածնի Աշտարակին արեւելեան սեղանի կողմի պատը ծակել եւ ներս մտնել: Մէզը եւ մշուշը ամէն բան փակած էր մեր աչքերուն առջեւէն: Թանձր մութ մշուշի պատ մը կար մեր եւ անոնց մէջտեղ: Ոչինչ չէր լսուեր, ոչինչ չէր հասկցուեր բացի մուրճի մը անվերջ ու խուլ հարուածներուն շարունակական ձայներէն: Մենք երբ հարուածներուն ձայնը

լսեցինք, խորհեցանք թէ պարիսպն է որ կը ջանան ծակել, երբ լուսարար Սահակը եկաւ եւ հեաշունչ ձայնով մը ըսաւ. «Փաշա՛ դուր կը ծակեն»։ Թուրքեր Աշտարակի մատուռը մտնելէ վերջ կը ջանային դուռը ծակել եւ հրացանի ծակեր բանալ դրան վերեւ իրենց համար։ Այս ատեն մէզն ու մշուշը քիչ մը նօսրացաւ եւ նշմարելի կ'ըլլար ան այլևս, ուստի մենք բոլորս մեր հրացանները ուղղելով դէպի թուրք զինուորին սատկեցուցինք զայն։

Սպաննուողը թուրք հարիւրապետ մըն էր, որ սրտնեղած իր զինուորին ապիկար մուրճի հարուածներէն, ինք անձամբ ձեռք առած էր մուրճը դրան վերեւ հրացանի ծակեր բանալ ու ահա այդ ատեն էր որ օգտուելով մէզէն մենք սպաննեցինք զայն։

* * *

Պէտք էր հսկել վանքի պարիսպին, պէտք էր հսկել թշնամիին անցուդարձերը, պէտք էր հսկել եւ քաջալերել մեր դիրքերուն մէջ նստած տղայքները, իրենց այս յանդուգն

ձեռնարկին համար, պէտք էր իմանալ թըշնամիին ուժեղ ճակատը եւ հոն շարել վարպետ եւ ճարտար զարնող տղայքները թըշնամին վհատութեան, յուսալքումի եւ պարտութեան մատնելու համար: Վեց հազար զինուորներ ամէն դիրքերու վրայ ուժեղցած իրենց ափին մէջ առած կը կարծէին մեզ: Անոնք վստահ էին թէ այսօր կամ վաղը պիտի կրնան ձեռք ձգել մեզ ալ ու ձողերու վրայ անցուցած մեր զուխները ցոյցի պիտի դնեն Մուշի եւ Պիթլիսի հրապարակներուն վրայ, իրենց կուրծքերը պատուանշաններով զարդարելու եւ նոր նոր դիրքերու արժանանալու:

* * *

Նոյ. 17ի առաւօտն էր: Այսօրուան կռիւր ահաւոր եւ անբաղդատելի էր նախորդ կռիւներուն հետ: Թուրք զինուորներն ու զօրականները իրենց պաշտօնատարներուն հետ զայրացած էին մեր կորովի եւ յանդուգն կեցուածքին համար: Իրենց բոլոր երազները եւ ակնկալութիւնները չքացած եւ փճացած էին, ուստի իրենց ատելութեան

մէջ մուկեցին սկսան կրակ տեղալ անվերջ եւ անընդհատ, վայրկեան մը իսկ դադար չկար: Վեց հազար հրացաններ ամէն կէտերէ ահաւոր ձայներով կուգային կը զարնուէին վանքի պարիսպին եւ գմբէթին, իրենց պատասխան ընդունելով միմիայն քանի մը հրացաններու համրուած փամփուշտները: Ոչ թրքական հրացանները, ոչ ցուրտն ու քամին կրնային սարսափեցնել եւ մարել կրակը մեր սրտէն, երբ դեռ երէկ արցունքի եւ վրէժի հետ սիրելի Ղազարը թաղեցինք: Պէտք էր սպաննել, սպաննել շարունակ լուծելու համար վրէժը ամէն՝ անոնց որոնք ինկած էին: Տարափի պէս տեղացող հազարաւոր գնդակները կը սուլէին, կ'անցնէին մեր գլխուն քովէն, մեր ոտքերուն առջեւէն, բայց վանքը հոն էր **տիրական եւ հզօր:** Մենք երբեք չի թերացանք, երբեք չընկճուեցանք, այլ մեր խիզախ կեցուածքով թշնամիին թուլցած եւ վհատած բազուկներուն յուսալքում պատճառեցինք զոհեր խլելով:

Պարտուած եւ ինկած էին թուրք բազուկները, ուստի թուրք դիւանագիտութիւնը իր ճարտար մեքենայութեամբ ուզեց կա-

պել եւ խարել հայ հերոսները, ուստի երբ անգոր էին իր հրացանները, իր լեզուն, իր սատանայական հնարքները ուղեց ձեռք առնել՝ իր պարտութիւնը, իր ամօթը ծածկելու համար:

Կէսօրուան մօտ էր, երբ յանկարծ հրացանները լռեցին եւ թրքական փողերը դարձեալ սկսան հնչել եւ ահա կին մը երեւցաւ ձեռքերը վեր օդին մէջ բարձրացուցած: Այդ կինը դէպի մեզ կուգար ձեռքին մէջ թուղթի կտոր մը բռնած: Երբ կինը վանքի փոքր դրան առջեւ հասաւ, իր ձեռքին մէջ բռնած այդ պահարանը դրան ճեղքէն մեզի տուաւ: Նամակ մըն էր որ ուղղուած էր մեզի թուրք կառավարութենէն հետեւեալ իմաստով. «Ի՞նչ կ'ուզէք, ի՞նչ է ձեր պահանջը եւ նպատակը»:

Պատասխանեցի թէ ես իմ ըսելիքներս գրաւոր չեմ կրնար ըսել, որովհետեւ շատ երկար է, կ'ուզեմ որ Ֆէրիք եւ Ալի փաշաները Պիթլիսի կուսակալին հետ հոս գան եւ ես այն ատեն բերանացի կ'ըսեմ իմ ըսելիքներս:

Կինը իմ երկտող նամակս առնելով մեկնեցաւ:

Նոյ. 19ի գիշերը ժամը 3.15ին նորէն
թուրք զինուորները երեք տեղերով ուժեղ
յարձակում մը սկսան: Մեր 37 կանոնաւոր
եւ չախմախլի հրացանները կը պատասխա-
նէին անոնց: Մութ էր երկինքը: Ահաւոր
մշուշ մը տարածուած էր մեր շուրջ: Զիւնը
թուրք գնդակներու խառնուած այնքան ա-
հաւոր ու սարսուացուցիչ չէին, որքան բնու-
թեան տարրերուն առթած դժուարութիւն-
ները: Տասը քայլի վրայ ոչինչ չէր երեւեր:
Ես էի որ միմիայն իմ ձեռքիս մէջ մաւզէր
հրացան ունէի: Կասկած մը սիրտս կը մա-
շեցնէր թէ մի գուցէ թուրք զինուորները օգ-
տուելով մշուշէն թնդանօթի կրակով կոտ-
րէին վանքի մեծ երկաթ գամերով ծած-
կուած երկփեղկանի դուռը եւ ներս լեցու-
էին: Այս կասկածին առջեւ տարուած ես մեծ
դրան կը հսկէի, քաջալերելով դիրքին ետեւ
դիւցազնօրէն կռուող մեր զինուորները,
հաւաքելու իրենց ուժերը անվհատ, քանզի
կ'զգայի թէ մերն է յաղթանակը, որովհետեւ
արդարութիւնն էր մեր ընկերը:

Արշալոյսը դարձեալ կը բացուէր եւ
թուրք հրացանները դարձեալ կը լռէին
իրենց անկումը եւ պարտութիւնը տեսնելով:

Նախորդ իրիկուան կասկածս փարատելու համար իսկոյն կանչեցի Միաբանութիւնը եւ զինուորներէն մաս մը եւ վանքին երկփեղկանի դուռը ետեւէն քարով, փայտով եւ հողով ամրացուցի: Այլեւս ոեւէ մտահոգութիւն եւ վախ չունէի թնդանօթի կրակէն:

Մեր ամրացուցած այդ դուռը այդպէս մնաց մինչեւ 1908 օսմ. սահմանադրութեան օրերուն:

Երկու օրուան հրացանի ահաւոր ձայներէն ազդուած Յարութիւնը սոսկալի կերպով կը պոռար: Ան կը խորհէր թէ մենք զինք պիտի լքէինք եւ ինք ողջ ողջ թուրքերուն ձեռքը պիտի մնար, ուստի անվերջ եւ անընդհատ կեպով կը պօռար եւ իր ձայնը կը լսէին թուրք զինուորներն իսկ իրենց դիրքին մէջէն: Քովը վազեցի եւ գրկեցի զայն եւ ըսի «Ի՞նչ է Յարութիւն, ինչո՞ւ կը պօռաս»: «Գնդակ մը չեմ արժեր որ չես սպաներ ու երթար եւ զիս հոս ողջ թշնամիին կը ձգես»: «Յարութիւն ի՞նչ գաղափար ունիս մեր վրայ, մենք քեզի համար տեղ պատրաստած ենք, մեր ուսերուն վրայ առած պիտի տանինք քեզ, եթէ չի կրնանք ես իմ ձեռքովս պիտի սպաննեմ քեզ»:

Նախորդ գիշերուան մութէն օգտուելով թուրք զինուորները գոմին պատը ծակած ներս խուժած էին: Գոմին ներսի պատն ալ ծակելով մարագը եկած դիրքեր բռնած էին գոմին եւ մարագին մէջ մեզմէ եօթանասուն քայլի վրայ: Յանկարծ մէկը քրդերէն լեզուով հայհոյանք մը ըրաւ դէպի մեզի եւ սկսաւ պօռալ.

«Անդրանիկ Փաշա, Անդրանիկ Փաշա, ես Մերտինի զաւակն եմ, Հասանին ալ հայրը, ո՞ւր պիտի ազատիս իմ ձեռքէս»:

Գէորգը թարգմանեց խօսուած խօսքերը. ըսի Գէորգ պատասխանէ անոր քրդերէնով, քանզի ես քրդերէն չեմ գիտեր: Գէորգը պատասխանեց. «Ես պզտիկ Գէորգն եմ եւ Հասանին մօրը սիրականը, դուն ո՞ւր պիտի ազատիս իմ ձեռքէս»:

Մարդը ձայնը կտրեց. Այն ատենն էր որ թուրք մը ձայն տուաւ եւ ըսաւ. «Գէորգ Չավուչ դո՞ւն ես»:

Այդ վայրկեանէն Գէորգին անունը մնաց Գէորգ Չավուչ: Գէորգ կարգ մը հայհոյանքներէ վերջ պօռաց. «Գացէք սոխ ու սխտոր ծախեցէք, դուք ուր կոռիլը ուր»:

* * *

Վանքը հինգ հատ գաղանի պէս շուներ ունէր: Թուրք զինուորները սպաննած էին չորսը եւ մէկ հատը վիրաւոր ինկած էր վանքի պատին տակ: Այս շուներուն սպաննուիլը մասամբ օգտակար եղաւ մեզի, այն գիշերը որ մենք վանքը ձգէինք, կրնար ըլլար որ անոնց ձայները մատնէին մեզ, ձախողանքի մատնէին մեզ, ձախողանքի մատնելով մեր ձեռնարկը:

ՅԱՐՈՒԹԻՒՆԻՆ ՄԱՀԸ

Յարութիւնին վէրքը ես իմ ձեռքովս կը դարմանէի: Վանքին մէջ պէտք եղած դեղորայքները եւ միջոցները չունէինք: Ինչ որ կրնայինք ընել ըրինք առանց բան մը դրանալու: Հովանոցի ձողի մը (ճաղ մը) վրայ խայթան մը անցուցած երեսուն սանթիմ երկարութիւն ունեցող վէրքը զգուշութեամբ կը մաքրէի: Գնդակը ջախջախած էր

սրունգին ոսկորը եւ մկանները: Վէրքը օրէ օր սկսաւ նեխիլ եւ ծանրանալ: Այլեւս գիտէի որ ապրելու ոեւէ յոյս չկար, բայց չէի խնայեր ոեւէ բան քանզի Յարութիւնը ամենէն քաջ եւ ամենէն շատ սիրուած գինուորն էր: Նոյմ. 20ի գիշերը զիս իր քով կանչեց եւ ըսաւ. «Փաշա այլեւս գիտեմ որ պիտի մեռնիմ, եղբօրս տղին դպրոց դրէք եւ կոնակիս ապան անոր դրկեցէք: 10 արծաթ տուած էիր Համբարձումը թաղելու, ահա աւելցածը առ: Վստահ եմ թէ դուք իմ վրէժս տասն անգամ աւելի պիտի լուծէք»:

Աւելորդ կը համարէի այլեւս քաջալերական ոեւէ խօսք խօսիլ: Գրկեցի զայն, թեւերուս մէջ եւ համբուրել սկսայ: Զուր ուզեց, խմցուցի եւ քիչ վերջ բաժնուեցայ թաց աչքերով եւ կոտորած սրտով: Յարութիւնը ինկած էր, քաջ Յարութիւնը՝ անոր կորուստը մեծ շատ մեծ նշանակութիւն ունէր մեզի: Զինուորները մէկիկ մէկիկ Յարութիւնին քովը դրկեցի որ համբուրեն զայն եւ իրենց վերջին յարգանքը մատուցանեն՝ որուն արժանի էր Յարութիւն:

Առաւօտեան դէմ ժամը երեքին Յարութիւնն ալ մեռաւ, խոր սուգի եւ վշտի են-

Թարկելով իր բոլոր ընկերները: Երգելով ու աղօթելով, խաչով ու խունկով Ղազարին նման թաղեցինք զայն Սբ. Գէորգի մատուռին առջեւ:

Յարութիւնը ազնուախոհութեամբ եւ քաջութեամբ առաջին էր զինուորներուն մէջ: Բոլոր ընկերները ըլլային անոնք հինգ տարուան կամ երկու կամ երէկի եկողները՝ կը սիրէր, կը գուրգուրար անոնց վրայ: Հուժկու էր, լայնսիրտ եւ անվախ: Շատ համեստ էր եւ պարկեշտ, զոհաբերող ու ներող: Միջակ կրթութեան տէր՝ բայց հայրենասիրութեամբ լեցուն էր:

* * *

Մեր փամփուշտները հատնելու մօտ էին, ուստի պէտք էր նոր փամփուշտներ լեցնել, փառուած փամփուշտներուն պակասը լրացնելու համար: Գործի լծուեցանք եւ այդ գիշեր 5000 փամփուշտներ լեցուցած էինք յաջորդ օրուան յարձակումին դիմադրելու եւ ոեւէ պատահականութեանց տոկալու համար:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸ ԹՈՒՐՔ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Նոյմ. 22ի կէսօրն էր: Երկու կողմէն դադրած էին հրացանաձգութիւնները: Այն հայ կինը որ քանի մը օրեր առաջ նամակ մը բերած եւ իր պատասխանը առած գացած էր, դարձեալ երեւցաւ իր ձեռքերը օդին մէջ բարձրացուցած: Այս կնոջ կ'ընկերանար վանքին վանահայր Յովհ. Վարդապետը: Մուշէն կուգային անոնք, իրենց հետ նամակ մը բերելով: Վանահայրը եւ կինը վանքի դրան առջեւ հասան: Դողդոջ ձայնով մը վանահայրը ըսաւ. «Աստուած օրհնէ, Աստուած օրհնէ, ի՞նչ պիտի ըլլայ ձեր վիճակը չորս կողմ արիւններ թափուած էր: Աստուածաձայնի մատուոյն գետինը արիւնով ծածկուած էր: Թուրք սպաննուածներն ու վիրաւորները գիշերով Մուշ կը բերուին յուսալքում չի պատճառելու թուրք ժողովուրդին»:

«Հայր սբ. ինծի ըսէ թէ թուրք զինուորը ամենէն շատ ո՞ր կողմը կեդրոնացած է եւ

այդ զօրքերուն հրամանատարին վրանը ո՞ր կողմն է»:

«Փաշա՛, ամէն կողմերդ զօրքերով լեցուն է: Լսածիս նայելով հրամանատարին վրանը **Ո՛ւե Յովհաննու Քարերն են:** Աստուած օրհնէ ձեզ, կարդացէք այդ նամակը և պատասխանեցէք: Սուլթան Համիտէն իրատէ (հրաման) ելած է որ Մուշի քաղաքապետը, Սոսրով Վրդ. Պէհրիկեանը, Մուշտար էֆ.ին եւ քոմիսար Մուհամմէտ էֆէնտին գան եւ լսեն ձեզ եւ իմացնեն Վերին Մարմիններուն ձեր պահանջները»:

«Հա՛, ես ուզեցի որ Պիթլիսի կուսակալը, Ֆէրիք եւ Ալի փաշաները գան, անոնց հրաման եղած է»:

Նամակին պատասխանեցինք թէ թող գան: Յովհ. Վարդապետը եւ կինը մեր նամակը ստանալով հեռացան վանքէն:

Այն օրը որ մենք իրենց նամակին պատասխանեցինք թէ թող գան, իսկոյն վանքին Առաջնորդարանը մաքրեցինք եւ մոմերուն դատարկ քառասուն սնտուկները բերինք եւ Առաջնորդարանին մէջ իրարու վրայ շարեցինք՝ վրայի չորս հինգ սնտուկները միայն փամփուշտներով լեցնելով:

Փամփուշտի այդ սնտուկներուն քով ցիրուցան ձգեցինք փամփուշտ լեցնող գործիքները, անգլիական եւ տեղական վառօղներուն տոպրակները եւ սնտուկները: Մենք զմեզ պատրաստեցինք ընդունելու մեր «բարեկամները» որոնք պիտի գային մեզ մօտ լսելու մեր պահանջները...:

Նոյ. 23ի օրը ժամը 6.30-ին (ը. թ.) թրքական փողերը դարձեալ հնչեցին: Քանի մը վայրկեան վերջ մէկ քանի անգէն մարդիկներ երեւցան: Անոնք դէպի մեզ քալել սկսան: Երբ մեզի մօտեցան, տեսանք թէ Մուշի Առաջնորդ Խոսրով Վարդապետ Պէհրիկեան, Մուղտատ էֆ., Մուհամմէտ էֆ.ին եւ վանահայր Յովհ. Վարդապետն էին:

Աչքի զարնող ինը տղաքները իսկոյն իրենց դիրքերուն վրայ պահապան դրի եւ մնացած զինուորներուն ալ պահեցի որ անոնք չի տեսնեն մեր զինուորին խեղճ հագուստը եւ իրազեկ ըլլան մեր ուժին եւ քանակին:

Երբ խումբը Աստուածածնի մատուռին առջեւ հասաւ՝ հոն կեցան եւ սկսան մէկ քանի վայրկեան թուրք զինուորին հետ խօսիլ: Երբ վանքին դրան առջեւ հասան իսկոյն

Վաղարշակն ու Բարսեղը զրկեցի որ վանքին փոքր դուռը բանան եւ հիւրասիրեն դէպի Առաջնորդարան: Տասը վայրկեանի չափ Վաղարշակին եւ Բարսեղին հետ խօսքի բռնուեցան քանզի կը վախնային ներս մտնել: Իսկոյն վերէն պօռացի. «Կամ ներս թող գան, եւ կամ հեռանան. թէ որ մենք զարնել ուզէինք, արդէն զարկած էինք հեռաւորութեան վրայ: Պէտք է գիտնան թէ երբ մենք խօսք կուտանք, ամէն գնով մենք մեր խօսքերը կը յարգենք»:

Ներս եկան եւ հիւրասիրուեցան Առաջնորդարան:

«Բարեւ ձեզ»:

«Բարի տեսանք»:

Սկսան իրենք զիրենք ծանօթացնել, Մուղտատ էֆ., Մահմէտ էֆ.ին, Առաջնորդը եւ Վանահայրը:

«Նստեցէ՛ք, նստեցէ՛ք», ըսի:

Մուղտատ էֆէնտին վախէն կը դողար: Երբ Մուղտատի այդ վիճակը տեսայ՝ ըսի. «Կատարեալ կերպով դուք զձեզ ապահով զգացէք եւ մի՛ վրդովիք երբէք»:

Խոսրով Վարդապետ իր աջը երկարեց ինծի եւ ըսաւ.

«Համբուրէ, դաւակս, համբուրէ»:

«Մտածելիք ունիմ, պէ՞տք է համբուրեմ՝
թէ ոչ»:

«Աստուած օրհնէ, համբուրէ՛, համբու-
րէ՛»:

Համբուրեցի աջը: Վանահայրը եւ Պէհրի-
կեանը դիտմամբ իրարու հետ կը շփոթէի
անոնց անունները տալու ատենս: Ես այդ-
պէս կ'ընէի որ Յովհ. Վարդապետը ռեւէ
պատասխանատուութենէ ազատ պահեմ:
Վանահայր Յովհ. Վարդապետը երկար շատ
երկար տարիներէ ի վեր կը ճանչնայի եւ
վայելած էի շատ անգամներ անոր հիւրա-
սիրութիւնը եւ բարեկամութիւնը:

Հայութենէ դարձած Մուհամմէտ էֆեն-
տին սխալներս կը շտկէր քմծիծաղով մը՝
երբ Յովհաննէսին Խոսրով եւ Խոսրովին
Յովհաննէս կ'ըսէի: Մեր խօսակցութիւնը
սկսաւ եւ ես այսպէս խօսեցայ:

«Կը փափաքէի որ Ալի եւ Ֆէրիք փա-
շաները հոս ըլլային Պիթլիսի կուսակալին
հետ, բայց քանի որ սուլթան Համիտը ձեզ
նշանակած է գալ եւ դուք եկած էք, լաւ.....»

Այս ատեն էր որ Մուղտատ էֆէնտին
խօսքս ընդմիջելով դողդոջ ձայնով մը ըսաւ.

«Փաշա՛, վանքը (թէ՛քէ՛ն) թող վկայ ըլլայ, ոչ մէկ բառ ոչ աւելի, ոչ պակաս պիտի ըսեմ: Պիտի խօսիմ ինչ որ ըսէք մեզի»:

Մենք մեր կոնակները մոմերու դատարկ սնտուկներուն տուած էինք: Իմ ձախ կողմս նստած էր «Գէորգ Չաւուշը», անոր ձախ կողմը Հաճի Յակոբը. դուռը կեցած էր Վաղարշակը, իսկ լաւ գինուորներէն մաս մը դիրքերուն վրայ կեցած՝ կը հսկէին դուրսի անցուղարձերը:

Մուղտատ էֆէնտին դողդոջուն ձեռքով մատիտ մը բռնած սկսաւ նօթագրել կտոր մը թղթի վրայ ինչ որ ըսի: Մեր պահանջները հետեւեալներն էին:

1.— Պօլիսէն մինչեւ հոս քաղաքական բոլոր հայ յանցաւորներու ներում:

2.— Իւրաքանչիւր գիւղէ հաւաքուելիք տասանորդը պէտք է գիւղացին ինք հաւաքէ եւ յանձնէ կառավարութեան՝ իրեն հետ ունենալով բարեխիղճ պաշտօնեայ մը միայն:

3.— Այն քիւրտերը որոնք միշտ յարձակում գործեր են հայ գիւղերուն վրայ, գինաթափ ընել եւ կամ պաշտպանել այդ գիւղերը:

4.— Այն բոլոր Հայ գիւղերը որոնք գրաւուած են քիւրտերէն, վերադարձուին Հայերուն:

5.— Այն բոլոր քիւրտ ցեղապետները որոնք կառավարութեան Հետ Հայ գիւղերէն տուրք կ'առնեն, անոնց ջնջումը: Կառավարութեան մէջ կառավարութիւն չըլլար:

6.— Դուք յեղափոխականներս աւազակներ կոչած էք: Աւազակները պէտք է կառավարութիւնը ինք իր մէջ փնտռէ, որոնք ահագին զեղծումներ կը գործեն եւ կաշառքներ կ'առնեն: Երկար տարիներէ ի վեր է որ ես Հոս եմ իմ զինուորներուս Հետ. գողութիւն մը ըրած չեմ: Զեր փօսթան ինծի Հանդիպեցաւ, զայն տանող պաշտօնեաները ձգեցին ու փախան, մենք առանց կողոպտելու՝ թողուցինք եւ Հեռացանք: Յաջորդ օր ձեր զինուորները եկան եւ Հոն գտան տոպրակները, ձիերն ու ջորիները: Մենք խաղաղ ժողովուրդին ոչ մէկ օր կամ ոչ մէկ ատեն չարիք պատճառած ենք: Դուք գիտէք որ շատ անգամ մեզի քիւրտեր Հանդիպած են, մենք զանոնք ոչ սպաննած եւ ոչ ալ անոնց չարիք Հասցուցած ենք: Բայց այն որ մեզի կամ Հայ ժողո-

վուրդին դէմ չարիք գործած է, մենք պատ-
 ժած ենք զայն, ինչպիսին է **Պըշարը Խէլիը**:
 Պըշարը Խէլիըն էր որ Սերոր Փաշային գլու-
 խը կտրեց եւ անոր ընկերները սպաննեց իր
 է՛շրէթին եւ Ալի փաշային հետ հայ դաւա-
 ճաններու մատնութեամբ: Կոտորեց Թալո-
 րիկի Սպաղանաց գիւղի 27 կին եւ երեխա-
 ներ Տէր Պետրոսի հետ: Երբ անոնց դիակ-
 ները թաղուած էին հայ գիւղացիին կողմէն,
 48 ժամ վերջը եկաւ հանեց եւ Ռէխս Մա-
 կարին տան մէջ լեցնելով քարիւղ ցանեց եւ
 վառեց զանոնք, անոնց հետքերը անհե-
 տացնելու համար: **Հէթիկ** գիւղէն եօթը երի-
 տասարդներ բռնելով կապեց զանոնք ա-
 նոնց թեւերէն եւ գետը իջեցուց եւ հրացա-
 նազարկ ըրաւ բոլորն ալ: Այս բոլորը կա-
 տարուեցան թուրք կառավարութեան թե-
 լադրութեամբ: Թուրք կառավարութիւնը
 միացած Խէլիլի հետ՝ այս ոճիրները գոր-
 ծադրեց եւ սուլթան Համիտ անոր կուրծքը
 պատուանշանով զարդարեց, Ալվարիճ հայ
 գիւղին տասանորդն ալ անոր ընծայելով:
 Ահա այսպիսի հրէշներն էին որոնք պատ-
 ժուելու տեղ կը վարձատրուէին շքանշան-
 ներով եւ ընծաներով:

Ես երեք տեղերու վրայ մարդիկ դրած
Նէլիլի ճամբան կտրած էի, եկաւ ու ողջ ողջ
ձեռքս անցաւ. հարցաքննութենէ մը վերջ
այս **խէնչէրովս** եւ այս ձեռքերովս անոր վի-
զը կտրեցի: Ահա սուլթան Համիտի տուած
պատուանշանն ալ: Նէլիլին գլուխը կտրելէս
մինչեւ այսօր անոր հետ գործակցող ընկեր-
ներէն տասնեւեօթը հոգին ալ սպաննեցինք:
Կառավարութիւնը փոխանակ ուրախանա-
լու չարագործներուն պատժուիլը տեսնելով,
բանտարկեց երեսուն եւ մէկ անմեղ հայեր,
ենթարկելով զանոնք անլուր չարչարանք-
ներու:

7.— Մոկունք գիւղի շէրիֆին սպանու-
թեան համար տասնեւհինգ անմեղ հայեր
բանտարկեցիք եւ քանի մը օր վերջ ձեր
օրհնուած աղը տուիք եւ անոնք մեռան
չարաչար մահերով: Անոնց տրուած թոյնին
սաստկութենէն գլուխներուն մազերն իսկ
թափեցան: Դուք առանց խղճահարուելու
բանտերուն մէջ լեցուցիք մօտաւորապէս
հարիւր եօթանասուն անմեղ հոգիներ եւ
տակաւին կ'ըսէք ինծի թէ **ի՞նչ է նպատակդ**
եւ ի՞նչ կ'ուզես:

8.— Սբ. Աղբերիկ վանքի վանահայր Ղազար վարդապետը դուք սպաննել տուիք երկու քիւրտերու ձեռքով, գիշեր ատեն վանքին դուռը բարեկամաբար ափ առնելով: Այդ երկու քիւրտերն ալ ես սպաննել տուի:

9.— Տ.կերտէն մինչեւ Պարսից սահմանը զինուած 150,000 քիւրտեր կան, ի՞նչ են ասոնք, եւ որո՞ւ դէմ ուղղուած են անոնց գէնքերը: Անոնք պահուած են միմիայն հայուն պատուհաս դառնալու: Եթէ կ'ըսէք թէ արդարութիւն կայ, ո՞ւր է, եւ ինչո՞ւ կը բանտարկուին հայերը: Ինչո՞ւ չեն բանտարկուիր քիւրտերը իրենց հրացաններուն համար, ո՞ւր է այդ արդարութիւնը եւ «հայրական գութը»:

10.— Այս ի՞նչ տեսակ պաշտօնէութիւն է որ ամէն տեսակ բռնութիւններ կը բանեցնէ հայ ժողովուրդին վրայ տուրք հաւաքելու պատրուակին տակ, խլելով անոնցմէ իրենց վերջին հացի կտորը՝ Հայ պատիւին հետ: Այս վերջինը մեզի համար, անտանելի է: Գուք երբեք չէք խղճահարուիր ճնշելէ եւ հալածելէ տկար ժողովուրդները եւ թոյլ քիւրտ էշիրէթներն ալ:

11.— Մարգար վարժապետը կախեցիք, Մուրատն ու Տամատեանը բանտարկեցիք, Սերոբ փաշան եւ Գուրգէնը սպաննեցիք, եւ հիմա ես եմ որ հոս եմ: Մենք հարիւրաւոր մղոններ կտրած հոս եկած ենք մեր պատանքները մեր տոպրակներուն մէջ դրած: Եթէ այս համեստ առաջարկներուս բաւարարութիւն չտրուի, մենք ուժ ունինք վեց ամիս դիմադրելու— աչքերս դարձնելով դէպի մոմի դատարկ սնտուկներուն: Քանզի թուրք ներկայացուցիչները չէին գիտեր թէ մոմերուն սնտուկները դատարկ էին: Անոնք այն տպաւորութիւնը ստացան թէ այդ քառասուն սնտուկները լեցուն էին ռազմանիւթերով: Այս բոլորին բաւարարութիւն տալու համար պէտք է վաւերացուին սուլթանէն եւ Օտար դեսպաններուն կողմէ, այն ատեն ես իմ երկրորդ ըսելիքս կ'ըսեմ: Եթէ իմ ըսածներս հեռագրէք, քսանեւչորս ժամէն Պոլիս կ'երթայ, երկու օր հոն խորհրդակցելէ վերջ՝ անոնց պատասխանը 13 օրէն փութով հոս կը հասնի, իսկ եթէ դուք շինուածք մը ընէք կտոր մը թուղթի վրայ, այդ պիտի մերժուի մեր կողմէն եւ պիտի վերադարձուի ձեզի:

Մեր խօսակցութիւնը տեւեց 7-10.30 ը. թ., երբ մեր խօսքերը լմնցան Մուղտատ էֆէնտին ըսաւ թէ «Փաշա՛, կարելի չէ՞ որ երկու կողմէն զինադադար մը կնքուի մինչեւ մեր պատասխան ստանալը»: «Յայտնեցէք ձեր զինուորականներուն, եթէ իրենք յարգեն իրենց խոստումները, ես ալ կը յարգեմ, եթէ զարնեն, ես ալ կը զարնեմ»:

Մեր խօսակցութեան միջոցը զինադադար մըն էր ինքնին, թուրք զինուորները ազատ ու անվախ իրենց զիրքերէն դուրս ելած ձիւնին վրայ կը քալէին ու կը ծխէին:

Ժամը 10.30ին «մնաս բարով» ըսելով մեկնեցան: Երբ դուրս կ'ելլէին յիշեցուցի իրենց այն խոստումը որ նախապէս ըրած էին ինծի խօսելու իրենց բարձրագոյն պաշտօնէութեանց ճիշտ ու ճիշտ ինչ որ ըսինք իրենց: Այս ատեն էր որ Պէհրիկեան վրդ. հայերէնով դարձաւ եւ ըսաւ. «Տղաս այդ պահանջներդ մէկ օրուան, մէկ շաբթուան եւ մէկ տարուան գործ չեն, այլ տարիներու»:

Երբ մենք թուրք ներկայացուցիչներուն հետ վանքին Առաջնորդարանին մէջ նստած մեր առաջարկները կը ներկայացնէինք,

ինքնին զինադադար մըն էր: Այդ պատե-
հութենէն օգտուելով Ռուսիոյ հիւպատոսը
եկած եւ լուսանկարած էր թուրքերուն դիր-
քերը եւ պատնէշները Առաքելոց վանքին
հետ:

* * *

Խէլիլի սպանութեան պատմութիւնը
մասնաւոր նպատակաւ պատմեցի թուրք
ներկայացուցիչներուն, քանզի կառավարու-
թիւնը 31 հայեր բանտարկելով ծեծի եւ
չարչարանքի ենթարկած էր պատրուակե-
լով թէ այս նոր բանտարկուածները մաս-
նակից եւ պատասխանատու են Խէլիլի
սպանութեան: Այս պատմութիւնը դիտմամբ
պատմեցի տպաւորելու անոնց մտքերուն
մէջ թէ ես իմ զինուորներուս հետ կատա-
րած ենք Խէլիլի սպանութիւնը եւ պատաս-
խանատուն մենք ենք եւ ոչ թէ կարգ մը
անմեղ հայեր: Պատմութիւնս ակնկալուած
արդիւնքը իսկոյն բերաւ: Երեք օր վերջը այդ
31 անձերուն հեռագրով ներում եկաւ Կ.
Պոլսէն:

ՎԱՆՔԷՆ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԶԱՆՔԵՐ

Քսան օրուան մեր կոիւր արդէն արձագանգած էր Վանի, Պիթլիսի, Կարնոյ, Սարբերդի եւ Տիգրանակերտի նահանգներուն մէջ: Քիւրտ, թուրք եւ հայ ժողովուրդներ այն համոզումը ունէին թէ մեզի համար ազատութիւն չկայ երբեք: Հայերը ամէն օր հսկումներ եւ աղօթքներ կը կատարեն եղեր մեր ազատութեան համար վանքին մատաղներ խոստանալով:

Երբ մենք մեր պայմանները ներկայացուցինք թուրք ներկայացուցիչներուն, այդ վայրկեանէն իսկ գիտէինք թէ մեր առաջարկներն ու պայմանները անընդունելի էին: Երկու կողմէն ալ խաղ մըն էր որ կը խաղցուէր ժամանակ շահելու: Հակառակ մեր զինադադարի խօսքերուն Նոյ. 24ի օրը թուրք դիրքերէն հրացաններ արձակուեցան: Մենք սովորականին պէս պատրաստ ու կազմ էինք մեր դիրքերուն մէջ. ուստի

պատասխանեցինք անոնց բուռն կրակով:
Կարճ հրացանաձգութենէ վերջ օրը անցաւ
խաղաղ եւ հանդարտ:

Այդ գիշեր դարձեալ ցուրտ էր: Մէզը
մշուշին հետ ծանր ու խիտ կը տարածուեր
եւ կ'երկարէր մեր շուրջ անտանելի դարձ-
նելով եւ սառեցնելով ամէն բան: Թուրք
զինուորները որոնք մեզմէ շատ հեռու չէին,
մենք կը լսէինք անոնց խօսակցութիւնները
եւ տրտունջները որ կ'ելլէր կ'երկարէր
իրենց դիրքերէն եւ կուգար քամիին հետ
մեզի: Մահմուտ, Հասան, Մուսթաֆա, այս
ի՛նչ ցուրտ է, այս ի՛նչ մահեր են որ կը պա-
տահին ամէն օր, սա «ճան ֆէտայիներն»
ալ չեն անցնիր եւ երթար որ մենք ալ ազա-
տինք իրենք ալ»:

Յուրաք, մէզը եւ ձիւնը նոր եւ անհաս-
կանալի հիւանդութիւն մը բերած էին թուրք
զինուորին: Հիւանդութիւն մը որ ենթական
կը խելագարցնէր եւ կը մեռցնէր: Այս հի-
ւանդութիւնը այնքան մեծցաւ եւ տարա-
ծուեցաւ 6000 թուրք զինուորներուն մէջ որ
կառավարութիւնը Երիզայի 4րդ զօրաբա-
նակէն եւ Կ. Պոլսէն նոր բժիշկներ բերել
տուաւ դարման մը եւ ճար մը գտնելու հա-
մար:

Քսան օրուան մեր դիմադրութեան ըն-
թացքին մենք ալ մեր հիւանդները ունե-
ցանք: 60—70 որբերուն մէջ հիւանդութիւն
մը սկսաւ: Տասը որբեր փորհարութեան ցա-
ւով կը տառապէին, երկու զինուորներս հի-
ւանդ էին, ուտելիքը քանի մը օրերու հազիւ
կը բաւէր: Ռազմանիւթ, օճառ, ծխախոտ
հատնելու մօտ էին եւ չկային: Կը վախնայի
թէ նոր զինուորներ ալ հիւանդանան կամ
փորհարութեան հիւանդութենէն վարա-
կուին: Ուստի պէտք էր ճար մը, կերպ մը,
ճամբայ մը մտածել դուրս գալու վանքէն:
Քսան օրուան դիմադրութիւնը եթէ զգաս-
տութեան բերած չէր թուրք կառավարու-
թիւնը՝ թուրք եւ քիւրտ ժողովուրդներուն
հետ, գէթ չափով մը օգտակար եղած էր հայ
ժողովուրդին համար: Եթէ քսան օրուան
այս անհաւասար դիմադրութիւնը օտար
դեսպաններուն ուշադրութիւնը գրաւած
չէր, գէթ մտահոգութիւն պատճառած էր
թուրք կառավարութեան նոր պատասխա-
նատուութիւններէ զգուշանալու համար:

Գաղտնի կերպով կը լրտեսէի հասկնալու
համար զինուորներուս քարոյական կորովն
ու քաջութիւնը: Կը ջանայի կարելի եղած

չափով հանգիստ պահել եւ երկար քնացնել:
Չորս խումբերու բաժնուած էինք ղիրքերը
հսկելու եւ մեր պարտականութիւնները կա-
տարելու: Երեք ժամ Գէորգ Չաուշը կը
հսկէր, երեք ժամ Վաղարշակը, երեք ժամ
Հաճի Յակոբը եւ երեք ժամ ալ ես:

ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔԻՆ ԿՌԻՒԻՆ
ՄԱՍՆԱԿՑՈՂ ՁԻՆՈՒՈՐՆԵՐԸ
ԵՒ ԱՆՈՆՑ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Մենք մեր զինուորները իրենց առաջին
անունով կը կանչէինք: Երբեք չէինք հե-
տաքրքրուէր անոնց երկրորդ անունով կամ
ո՞ր գիւղէն կամ քաղաքէն եկած ըլլալնին:
Չէինք ուզեր գիտնալ այն նպատակաւ թէ,
կրնար պատահիլ որ մեզմէ մէկը կամ միւսը
թուրքերուն ձեռքը իյնար եւ ծեծի ու չար-
չարանքի տակ ակամայ մատնութիւններ
ըներ: Մենք ստիպուած էինք այդպէս ընել,
երբ նոյն ատեն նկատի ունէինք թէ միշտ
նորեկ զինուորներ կուգային ու կ'երթային,
կամ քիչ ատեն մեր մօտ կը մնային ու կը
հեռանային դարձեալ:

Անդրանիկ
Ուրուխցի Յարութիւն

Գէորգ Չաւուշ

Վաղարշակ

Հաճի Յակոբ

Ղազար

Սէյտո Պօղոս

Անտրիկ

Միսաք

Վարդան

Ասատուր

Սիմոն

Թէրփիէթօս Սարգիս

Զէթօ

Եղօ

Բարսեղ

Օսօի տղան Յովսէփ

Չաթալպաշ Արամ

Խասգեղցի Մկրտն

Մօսն

Իսն

Հաւատորիկցի Մուրատ

Նոյ. 26ի խստաշունչ եւ սառեցնող առա-
ւօտն էր: Մէզը երբեմն կը քշուէր ու կը
տարածուէր դէպի դաշտ եւ երբեմն ալ խայ-

Թող ցուրտին հետ կուգար եւ կը փաթթուէր մեր շուրջ ամէն բան ծածկելով մեր աչքերէն:

Վանքին մէջ որբերն ու Միաբանութիւնը սովորականին պէս այդ օր ալ իրենց աղօթքներն ու մաղթանքները կը բարձրացնէին առ Աստուած լեցնելով մեր սրտերը կրօնի եւ հաւատքի անուշ զգացումներով, երբ դուրսը քանի մը քայլ հեռուն ձիւնի կոյտերուն եւ հողի դէզերուն ետեւ բիրտ ձեռքեր եւ վայրի սրտեր իրենց գլուխները պահած ներս, ներս, վանքի դռնէն ներս կ'ուզէին խուժել եւ արիւնով եւ աւերով ծածկել ամէն նուիրականութիւն որոնք անեղծ ու մաքուր մնացած էին այդ չորս պատերէն ներս:

Կը մտածէի շարունակ երբ աչքիս առջեւ էին հիվանդ որբերը, հիւանդ զինուորները եւ այն անտանելի կացութիւնը որուն պիտի մատնուէինք ռազմանիւթի պակասին պատճառաւ: Կերպ մը, հնարք մը պէտք էր յղանալ պատուաւոր կերպով դուրս գալու: Երկար մտածումէ վերջ, վճռական որոշում մը տալով քովս կանչեցի Գէորգը, Վաղարշակը եւ Հաճի Յակոբը: Մեր ներկայ կա-

ցութիւնը եւ վաղուան բոլոր դժուարութիւնները բացատրելէ վերջ ըսի որ պէտք է այլեւս դուրս գանք վանքէն: Թուրքեր կեղծ թուղթ մը ձեռքերնին պիտի գան մեզ խարելու յոյսով, ուստի պէտք է գիշերով կտրել թուրք զինուորական շղթան եւ անցնիլ: Մի գուցէ թուրք կառավարութիւնը միամիտ լինի հաւատալու իմ խօսքերուս թէ մենք հոս պիտի մնանք 6 ամիս մինչեւ որ մեր պահանջները կատարուին:

«Ի՞նչ է քու կարծիքդ, ըսին, մենք ապահով եւ անվնաս դուրս պիտի կրնա՞նք գալ»:

«Հարիւրին 99ը մենք բոլորս ալ ապահով դուրս պիտի գանք եւ ոեւէ մէկին քիթը պիտի չարիւնի, եթէ մեր անփորձ զինուորները հետեւին մեզի եւ սխալներ չի գործեն: Դիրքերուն մէջ մէկ մէկ փորձառու զինուորներ դրէք եւ կանչեցէք բոլոր զինուորները վանքին հրապարակը որ ես դասաւորեմ զանոնք ձեր խմբապետութեան տակ եւ ըսեմ իմ ըսելիքներս»: Քանի մը վայրկեանէն կատարուեցաւ իմ թելադրանքներս, զինուորները հրապարակ իջան եւ շարքի կեցան: Բոլոր զինուորներուն պատուիրեցի որ զգաստ եւ արթուն ըլլան եւ ըմբռնեն ըսելիքներս:

Առաջին.— Գէորգ Չաոււշ, Սէյսո Պօղոս, Վարդան, Յովսէփ եւ ես 50—60 քայլ առաջ ձեր առջեւ ինկած պիտի քալենք դէպի թրքական դիրքերը ճերմակ շապիկներ հագած եւ ճերմակներ մեր գլուխը փաթթած, որպէս զի ձիւնին մէջէն չի տեսնուինք, իսկ Հաճի Յակոբ եւ Բարսեղ դուք պէտք է հետեւիք մեզի զոյգ-զոյգ շարուած խումբին առջեւէն: Ամէն մարդ պէտք է իր քովի ընկերը լաւ ճանչնայ, ինչպէս նաեւ իր առջեւէն քալող զոյգը: Խումբին յետնապահները պիտի ըլլան Վաղարշակ եւ Թէլփէթօս Սարգիս: Մենք հինգ հոգիներս երբ վաթսուն քայլի վրայ յառաջանանք եւ ծունկ զարնենք, պէտք է որ մեզի հետեւող խումբն ալ ծունկ զարնէ մեր օրինակին հետեւելով:

Մեր բռնած ուղղութիւնը պիտի ըլլայ Արապաօի եւ Արծիւի Քարերը, անկէ իջնել ձորը եւ անցնիլ **Մրզու գոմը**, որը դիմացի լեռան սարալանջին վրայ է: Մեր բոլոր հին գինուորները գիտէին այդ գոմը, ուստի նորեկներուն ալ ցոյց տուին զայն: Եթէ փորձի ատեն ոեւէ իրարանցում եւ կռիւներ պատահին եւ խումբը մասերու բաժնուի, ամէն մէկ խումբ կամ մաս պէտք է գոմին առջեւ

ձիւնին վրայ ձեռնափայտ մը խրէ իբր նշան իրենց անկէ անցած ըլլալուն: Քամին սաստիկ է եւ կրնայ ըլլալ որ գոցէ ձեր հետքը, ուստի այդ ձեռնափայտերը միմիայն վստահելի նշաններն են մեզի համար:

Վաղը Նոյ. 27ի իրիկունը ժամը 3.15, ը. Թ. գիշեր ատեն այստեղէն դուրս պիտի գանք: Մենք հինգ հոգիներս որ խումբին առջեւէն պիտի քալենք ճերմակներ փաթթած եւ շապիկներ հագած, պիտի զարնենք մեզի հանդիպող թշնամին, իսկ դուն Հաճի, քու խումբովդ պիտի անցնիս Արապպօի եւ Արծիւի Քարերը եւ թշնամին իր կոնակէն պիտի զարնես: Եթէ ձեր հրացաններուն ձայնը ելլէ մենք ձեզի օգնութեան կուգանք:

Այս բոլոր պատուէրները տալէ վերջ, խումբը վարժեցնելու համար բակին մէջ փորձեր կատարեցի, տեսնելու թէ ըմբռնա՞ծ են ընելիքնին: Կը քալեմ, ծունկ կը զարնեմ, ետիս կը նայիմ տեսնելու թէ բոլոր թելադրութիւններս կը կատարե՞ն իրենց խմբապետներուն հսկողութեան տակ: «Տըղայք, հասկցա՞ք ձեր կատարելիք պարտականութիւնը»: «Այո՛, փաշա, հասկցած եւ պատրաստ ենք»: «Հոս կանչեցէք ուսուցիչները եւ որբերը»:

Երբ ուսուցիչներ եկան, անոնց պատմեցի մեր նպատակ եւ ըսի թէ ձեւականութեան համար պիտի ծեծեմ ձեզ որքերուն առջեւ եւ պիտի բանտարկեմ, որպէս զի ձեզ ազատեմ ոեւէ պատասխանատուութենէ իմ վանքէն դուրս ելլելէս վերջ, առանց ոեւէ պատճառանքներ տալու կառավարութեան՝ ըսելու ձեզ թէ. «Դուք թէ որ բարեկամ էիք կառավարութեան, ինչո՞ւ զանգակը չի քաշեցիք եւ ձայն չտուիք մեզի Փէտայիներու գնալը»: Զեր վրայ դուռը պիտի կողպեմ եւ բանալիներուն տեղը միայն 80 տարեկան տնտես մայրիկին պիտի ըսեմ:

Նոյ. 27ի օրուան կէսօրն էր: Նոյն փորձերը դարձեալ կը կրկնեմ: Տեսայ թէ խումբը ըսածներս կատարեալ կերպով ըմբռնած է եւ գիտէ իր ընելիքները, ուստի յանձնարարեցի որ խումբը երկու օրուան հաց դնէ իր տոպրակներուն մէջ եւ պատրաստ ըլլայ մեկնելու ճիշտ ժամանակին:

Իրիկուն էր: Խիտ մշուշը ալ աւելի թանձրացաւ: Մշուշին մէջէն աղօտ շատ աղօտ կերպով կը բլբլան կրակի լոյսեր: Թուրք գինուորներ իրենց պատնէշներուն ետեւ կրակներ վառած մեզ կը հսկէին՝ գետնա-

փոր տունին մէջ սեղմուած: Պէտք էր զգոյշ
ըլլալ, պէտք էր զգաստ եւ արթուն ըլլալ
մեր ծրագիրը յաջողութեամբ յառաջ տանե-
լու եւ թշնամին ամօթի, զարմացումի եւ
անակնկալի մատնելու համար: Պէտք էր
Հայ հանճարը, Հայ միտքը, իր ճարտար
մտայնութեամբ եւ հզօր սրտով ծիծաղէր եւ
արհամարհէր յանդգնօրէն թուրք կառա-
վարութիւնը, իր պաշտօնեաները եւ զի-
նուորը, վերջը ուժեղ հարուած մըն ալ
տալով: Պէտք էր մեր յաղթանակով ցեխէ
ցեխ թաղուէր թուրք գահը եւ թուրք զի-
նուորականը աշխարհի առջեւ ծաղր ու ծա-
նակ ըլլար: Պէտք էր ամի մը ճան ֆէտա-
յիներու կորովը եւ յանդուգն սիրտը կտրէր
անցնէր վեց հազար թուրք կանոնաւոր զի-
նուորներու շղթան, յոյս, հաւատք եւ կորով
ներշնչելու հայ սրտերուն, որոնք տառա-
պած էին, անիրաւուած եւ զրկուած էին:

Ժամը կէսն էր: Թէ նախազգուշութեան
եւ թէ խումբը յանկարծակիի չի բերելու
համար, երեք հոգինոց երեք խումբեր զըր-
կեցի եռանկիւն ձեւով մը՝ երեք կէտերու
վրայ դիրքեր բռնելու: Երեք հոգի գոմին
անկիւնը պէտք էր դիրք բռնէին, նրեք հո-

զին Թադէոս Առաքեալի Աղբիւրը, երեք հոգի ալ երեք վիթխարի ծառերուն ետեւ: Եթէ մինչեւ ժամը երեքը թուրք զինուորներ հանդիպին «զարկէք, հրացանները առէք եւ ներս եկէք»: Այն վայրկեանին որ ձեզ ձեր զիրքերուն կը դրկեմ 12 զինուորներ վանքի դրան առջեւ զինուած կը պահեմ դուռը բաց ձգած, վտանգի մը պահուն հոն դիմեցէք, անոնք թէ ձեզ կը պաշտպանեն եւ թէ ձեզ ներս կ'առնեն: Եթէ ոեւէ դէպք չի պատահի, ժամը ճիշտ 3.15 անցած խումբը ճամբայ պիտի ելլէ, դուք ալ ձեր զիրքը թողուցած՝ իսկոյն կուգաք եւ կը միանաք ձեր շարքին՝ նախապէս որոշուած ձեր տեղերուն մէջ:

Ժամացոյցները կը շտկեմ եւ ճամբայ կը հանեմ իրենց պարտականութիւնները կատարելու համար: Ահա եկաւ վերջապէս բաժանումի ժամը: Բանտարկուած էին որբերն ու ուսուցիչները: Բանալիները ձգուած են ցեխերուն եւ ձիւնին մէջ: Ութսուն տարեկան ծերուկ տնտես մայրիկը հետս էր. «Մայրիկ ահա բանալին հոս ցեխերուն մէջ կը ձգեմ: Երբ մենք դուրս ելլենք դուռը կը փակես եւ երկաթը կ'անցնես: Վանքին դուռը չես բանար մինչեւ որ Ֆէրիք փաշան,

վանահայրը եւ Առաջնորդը չի գան: Եթէ
թուրք զինուորներ սպառնան մի՛ վախնար:
Եթէ սանդուխներ դնեն ու պարիսպէն ներս
գան դարձեալ դուռը մի բանար որ թուրք
զինուորները վանքը չի կողոպտեն»:

«Մեռնիմ քեզի, ինչ որ կ'ըսես անանկ
կ'ընեմ, Աստուած եւ Քրիստոս քեզի հետ
ըլլայ»:

«Գէորգ, Սէյտո Պօղո՛ս, Վարդա՛ն, Յով-
սէ՛փ, հագէ՛ք ձեր ճերմակ շապիկները եւ
փաթթեցէ՛ք ձեր գլուխները»:

Այն զինուորները որոնք նորեկ էին,
հրաման ըրի որ պարպեն իրենց հրացան-
ները, ըլլան անոնք **էվզէլի** կամ **չախմախլի**:
Այդպէս պէտք էր ընել այդ տասնեւհինգ
անվարժ զինուորներուն, որովհետեւ անոնք
անփորձ էին եւ կրնային վտանգել մեզ կրակ
բանալով:

«Գէորգ խուզարկէ անոնց հրացան-
ները»:

Գէորգ մէկիկ մէկիկ նայեցաւ հրացան-
ները:

Ամէնքն ալ կազմ եւ պատրաստ են,
տոպրակնին շալկած, հրամանի կ'սպասեն
շարժելու:

«Տղե՛րք, հետևեցէք ինձի որ Յարութիւնին եւ Ղազարին գերեզմանները համբուրենք եւ մեր վերջին յարգանքը տանք անոնց»: Կարգով անոնց գերեզմաններուն քարերը եւ վանքին ապանոսեայ դուռը համբուրեցինք կարճ, շատ կարճ աղօթք մը մըթմրթալով: Հաւատքի եւ յոյսի աղօթքներ էին որ կը մատուցանէինք հոն, երկու սիրելի կտրիճներու գերեզմաններուն վրայ եւ խունկով ու աղօթքով սրբացած վանքի հին, շատ հին նուիրական դրան առջեւ:

Ժամը 3.15 անցած էր արդէն, երբ ծերուկ տնտես մայրիկը մեզ ճամբու կը դնէր գիշերուան մութ ու մռայլ այդ պահուն:

Այլեւս վանքին նուիրական դռնէն դուրս էինք: Քսան օր այդ հոյակապ եւ պատկանելի հաստատութիւնը մեզի օթեան եւ պատնէշ եղած էր կռուելու Ազատութեան եւ Արդարութեան համար, ու հիմա կը մեկնէինք այլեւս այդ օրհնուած ու անեղծ մնացած սրբավայրէն դէպի փտանգներով լեցուն անորոշ կայանները...:

Հինգ ճերմակ շապիկներ հագնող զինուորներս առաջ ինկանք մեզի հետ առնելով վանքին դրան առջեւ սպասող տասներ-

կու զինուորները: Վանքին դուռը հանդարտորէն փակուեցաւ աղօթքի եւ մաղթանքի թափթփուն բառերու հետ: Քալեցինք մէկ քանի քայլ եւ ահա մեզի միացան երեք դիրքերու վրայ հսկող տղայքներն ալ եւ մտան իրենց որոշուած շարքերուն մէջ: «Ի՞նչ տեսաք տղերք ձեր շուրջը, ոեւէ մարդ կամ շարժում»: Նորեկ զինուորներէն մէկը ըսաւ. «Փաշա կարծեմ հոն մարդ կար»:

«Սէյտօ Պօղոս, ոեւէ մարդ տեսա՞ր»:

«Ձէ՛ փաշա, քամիին վզվզոցն էր»:

Հինգ ճերմակ շապիկներ հագնողներս 50-60 քայլ առաջ ինկած կը քալէինք լարուած ուշադրութեամբ եւ խուզարկու նայուածքներով: Երբ 50 քայլ յառաջ գացած էինք, իսկոյն ծունկ զարկինք քննելու եւ տեսնելու մեր շուրջ գտնուածները: Ետեւս նայեցայ եւ տեսնելու թէ խումբը ծունկ զարկա՞ծ է: Տեսայ թէ կարգապահութիւնը կատարեալ էր: Երեսուն քայլ դարձեալ յառաջացանք, նորէն ծունկ զարկինք, աջ ու ձախ եւ կեդրոնը խուզարկելու համար: Ոեւէ շարժում կամ շշուկ չկար, քամին միայն կը սուլէր ծառերուն մէջէն եւ ձիւնը կը պրտոյտքէր անընդհատ: Թուրք զինուորներուն

վառած կրակները տակաւին կը պլպլային: Երեսուն քայլ դարձեալ յառաջացանք: Քամին կատաղի գազաններու նման կը որոտա՛ր, կը գոռա՛ր ու կ'անցնէ՛ր մեր քովէն, մեր երեսին, մեր հագուստներուն զարնելով եւ ձիւնով շխտելով մեր դէմքերը: Երեսուն քայլ դարձեալ յառաջացած էինք եւ փոքր դարի մը վրայ ելած արդէն թուրք յառաջապահ զինուորին հետ դէմ դիմաց էինք: Դարը քարքարուտ էր եւ դէպի այն ձորը կը տանէր որ մենք նախապէս որոշած էինք անցնիլ անկէ գոմը հասնելու եւ ձեռնափայտեր խրելու իբր նշան խումբին ապահով անցնելուն համար:

Չայն մը, դողդոջուն ու կցկտուր ձայն մը յանկարծ կոչեց.

«Դուք ո՞վ էք»:

Մեր եւ թուրք զինուորին մէջտեղ հազիւ հինգ կամ վեց քայլ կար: Չորս ընկերներուս հետ մեր հրացանները ուղղելով անոր կուրծքին.

«Չի ճանչցա՞ր դիս, ես հարիւրապետ Մահմէտ էֆէնտին եմ, կէս ժամ է որ հոս կը խուզարկեմ եւ դուք կը քնանաք, այսպէ՞ս պիտի պահէք եւ հսկէք ճան ֆէտայի-

ները, արգիլելու անոնց փախուստը»: Սօս-
քերս դէպի Գէորգ Չաւուշին ուղղելով ըսի.
«Մահմէտ Չաւուշ այս մարդը կը քնանար,
այնպէս չէ»:

«Այո, էֆէնտի կը քնանար», ըսաւ Գէոր-
գը:

Մեր ետեւէն եկող խումբին յառաջա-
պահները կը լսէին մեր խօսակցութիւննե-
րը: Զեռքով նշան ըրի տղայոց որ զան եւ
ետեւի դիրքերը բռնեն: Քիչ մը վարանեցան
անոնք եւ ուշացան դիրքերուն ետեւ անց-
նիլ, ուստի օգտուելով առիթէն հարցուցի
թուրք զինուորին թէ «անունդ ի՞նչ է»:

«Հասան», պատասխանեց դողդոջ ու
վարանոտ ձայնով: «Ո՞ւր տեղացի ես եւ
որո՞ւ որդին ես, ըսէ ինձի, ես քեզի ցոյց
կուտամ առտուն այս անտարբերութեանդ
պատիժը»:

Դողդոջ ձայնով մը ըսաւ. «Աստուած,
Աստուած, չեմ գիտեր դուք ի՞նչ տեսակ
մարդիկներ էք»:

«Կտրէ ձայնդ թէ ոչ շան պէս պիտի
սատկիս», ըսի եւ հրացանս ուղղեցի կուրծ-
քին:

Նու՛մրը այս ատեն ի՛մ երկրորդ նշանիս վրայ եկաւ ու անցաւ մեր քովէն: Անոնք փոխանակ Արապպօի եւ Արծիւի Քարերէն անցնելու, ձիւնին վրայ նստած թեքուեցան դէպի ձորը ու ա՛լ չերեւցան: Ինծի հետ մնացած տղայքները իսկոյն քարերուն ետեւ անցան եւ հասան Արապպօի եւ Արծիւի Քարերը: Այս ատեն տեսայ թէ միմիայն ութը տղայ հետեւած էին ինծի եւ միւսները դէպի ձորն ի վար իջած եւ անհետացած էին շուտ հասնելու գոմը եւ զերծ ըլլալու թրքական կրակէն ու հետապնդումներէն: Երբ արդէն Քարերը հասած էինք թուրք զինուորը սկսաւ պոռալ.

«Ճան ֆէտայիները փախան, ֆէտայիները փախան»: Թրքական բոլոր դիրքերէն սոսկալի հրացանաձգութիւն մը սկսաւ, անվերջ եւ անհատնում հրացանաձգութիւն մը: 6000 հրացաններ կը սուլէին օդին մէջէն եւ ձիւնին ու փուքին հետ խառնուած կ'իջնէին, կուգային, կ'անցնէին մեր քովէն, մեր գլուխներուն վրայէն, բայց մենք լուռ ու անձայն մէզին ու մշուշին մէջէն, փուքին ու ձիւնին դէմ կոուելով դէպի գոմ, դէպի լեւրան սարալանջը կը դիմէինք մեզմէ առաջ

ձորը իջնող տղայոց հասնելու եւ դիրար ող-
ջագուրելու գոմին առջեւ:

Երբ քիչ մը յառաջացած էինք, թրքական
ծանր կրակներէն ազդուած ինծի ընկերա-
ցող տղայքները ըսին. «Փաշա հոս քարե-
րուն ետեւ կենանք եւ դիրք բռնենք»:

«Չէ՛ տղերք, մի՛ զարնէք, անոնք մեր
հետքեր կորսնցուցին եւ մեր հրացաններուն
կրակները պատճառ պիտի ըլլան մեզ մատ-
նելու եւ մեր ուղղութիւնը մատնանշելու»:

Երբ քիչ մըն ալ յառաջ գացած էինք ըսի.
«Տղա՛յք, հանեցէք ձեր թաշկինակները եւ
մաքրեցէք ձեր հրացանները»: Քամին եւ
ձիւնը այնքան ահաւոր ու ծանր էին որ
ծածկեր էին **կոլն** ու **գոմը**: Երկար, շատ եր-
կար փնտրեցինք, բայց չի գտանք: Երբ գոմը
փնտռելու ջանքին մէջ էինք, մէկը նշմարելի
եղաւ մութին մէջ, բռնեցինք զայն եւ տե-
սանք թէ **Յրոնք** գիւղի մեր անվարժ տղայք-
ներէն է: Չէր կրնար խօսիլ: Յուրտն ու
վախը բռնած էին իր լեզուն: Հագիւ կրցաւ
մէկ երկու բառ խօսիլ:

«Մկրօն... Մկրօն զարնուեցաւ... Գէորգ
Չաւուշ անոր ոտքէն քաշեց դէպի ձորը, ես
բաժնուեցայ եւ հոս եկայ»:

Կասկածներու տակ ընկճուած քալեցինք: Մկրօն սպաննուած էր, տղայքները չէին երեւէր, այս տղան միմիայն եկած հոս հասած էր: Ի՞նչ եղած էին միւսները, ո՞ւր մնացին անոնք, ինչո՞ւ համար գոմը չէին, երբ անոնք մեզմէ շատ առաջ ձորը իջած էին զերծ մնալով թրքական կրակէն: Այս մտածումները միտքս կը չարչրկէին, ուստի պէտք էր տեղ մը հասնիլ եւ լուր մը ստանալ եւ օգնութեան փութալ անոնց:

Ծիրինկատար, ճիտօ Քարոց, Կորէկի Աղբիւր Կուռթիկով Սասուն երթալը անկարելի էր, քանզի սաստիկ քամի էր եւ ձիւնը ահաւոր: Հովը այնքան ուժեղ էր, որ հակառակ մեր կամքին կը քչէր, կը տանէր մեզ յարդի մը պէս: Եթէ փորձէինք այդ ճամբայէն անցնիլ, անպայման եւ անկասկած ամէնքս ալ կամ խեղդամահ պիտի ըլլայինք եւ կամ ձեան հիւսերու տակ պիտի թաղուէինք, ուստի երկու ժամուան ճամբան վեց ժամէն կտրելով լուսարացին նշմարեցինք **Հաւատորիկ** գիւղին գոմերը: Երբ գոմը հասանք, գոմին տէրը դուռը բացաւ եւ մեզ ներս առաւ, **օճախը** վառեց եւ մենք կրակին

առջեւ մեր թաց հագուստները չորցուցինք: Զինուորներէն մէկին հրացանին կոթը կոտրած էր, իսկոյն զայն շինեցի եւ քիչ մը գարի հաց ուտելէ վերջ երկու տղայքներ գոմերէն մեզի հետ առնելով ճամբայ ինկանք դէպի **Շէյխնիստ**: Այս գոմին տէրը կարելի եղած չափով հիւրասիրեց մեզ: Այս մարդը քառասուն տարի էր որ հովիւ էր եղած եւ մեզ տեսած չէր: Հարցուցի անոր թէ՛ «Ի՞նչ գաղափար ունէր վանքին մէջ փակուած ճիժերուն մասին»: Ան ըսաւ թէ. «Աստուած հասնի վանքի ճիժերուն, չեմ գիտեր ի՞նչ խելքի կը ծառայեն: Կ'ըսեն թէ Ռուսաստանէն օգնութեան պիտի գան անոնց: Մեր գիւղէն 200 գերաններ տարին եւ ամէն օր 50—60 հայեր բռնի կը տանէին եւ աշխատեցընել կուտային գետնափոր տուններ շինելու վանքը պաշարող զինուորներուն համար»:

Երբ «մնաս բարով» ըսինք ու միացանք հարեւան գիւղէն եկող երկու տղայքներուն՝ ըսաւ. «Կ'երեւի դուք էիք վանքէն ազատուող ճիժերը, Աստուած եւ Քրիստոս ձեր հետ ըլլայ, բարի երթաք»:

ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Հաւատորիկի գոմերէն ճամբայ ինկանք դէպի Շէյխնիստ: Շէյխնիստի բնակիչները ամէնքն ալ մեզ կը ճանչնային, ըլլար ծեր կամ փոքր, այր թէ կին: Գիւղացիք երբ տեսան մեզ, սրտաբաց եւ ուրախ մեզ ողջագուրեցին: Անոնք ուրախ էին մեր ազատութեան եւ յաղթանակին համար, անոնք հիւրասիրեցին մեզ կաթով, կարագով, մածունով ու թանով: Այս գիւղէն վեց երիտասարդներ կանչեցի եւ պատուիրեցի որ երեք խումբերու բաժնուին եւ երթան ու լուր մը բերեն մեր տղոցմէն: Տղայքները հազիւ մեկնած էին, երբ գիւղացիք լուր բերին թէ ճիժերը իրենց հետ շալակաւորներ ունենալով ձորէն անցան: Այս որ լսեցի, ըսի անոնց. «Հաստատ դուք տեսա՞ք ճիժերը»:

«Այո՛ փաշա, տեսանք»:

«Տղերք, ուրեմն եկէք որ երթանք, շուտ աճապարեցէք որ անոնց հասնինք»:

Տղայքները յոգնած էին: Անոնք ամէնքը մէկ մէկ կողմ ինկած կը քնանային: Երկա՛ր

աշխատանքէ ու ջանքէ վերջ, վերջապէս կրցայ ոտքի հանել զանոնք, յառաջ երթալու եւ մեր ընկերներուն միանալու համար: Երբ ճամբայ կ'ելլէինք, գիւղացիներուն պատուիրեցի որ մեր ոտքերուն հետքը ձիւնին վրայէն անհետացնելու համար գիւղին ոչխարները դուրս հանեն: Երբ մենք դուրս կ'ելլէինք, անոնք իրենց 6000 ոչխարները դուրս հանեցին մեր ոտքերուն հետքերը անհետացնելու համար:

Երբ **Քոբ** երթալու համար ձորին բերանը հասանք՝ դէպի լեռը բարձրանալու, մեր առջեւ խումբ մը նշմարեցինք: Տասնետութը հոգինոց խումբ մըն էր ան: Այդ խումբէն երկու հոգի բաժնուեցան եւ դէպի մեզի ուղղուեցան: Երբ մեզի մօտեցան, տեսանք թէ մէկը հայ էր, միւսը քիւրտ: Հայուն հարցուցի թէ. «Տղա՛յ, մեր առջեւէն քալողները որո՞նք են», ըսաւ. «Փաշա՛, ութը քիւրտ, մնացածը հայեր են»:

«Շատ լաւ»: Քալեցինք եւ հասանք խումբին: Երբ Չէթօ եւ Սէյտօ Պօղոսը քիւրտերը տեսան՝ հրացաննին վերցուցին որ սպաննեն: Ապտակ մը մէկին, ուրիշ մը միւսին զարկի եւ սկսայ բարկանալ, եւ դառ-

նալով քիւրտերուն ըսի. «Մի՛ վախնաք, ոեւէ
բան պիտի չպատահի ձեզի»:

«Տղերք, 21 օր 6000 թուրք զինուորներու
դէմ կռուեցաք եւ ազատեցաք, ամօթ չէ՞
մեզի, աշխարհ ի՞նչ պիտի ըսէ. երբ լսէ որ
մենք սպաննեցինք այս անգէն քիւրտերը,
այդքան պատուաւոր դիմադրութենէ վերջ»:

Տղայքները ազդուած իմ խօսքերէն, գը-
լուխնին կախեցին եւ մտիկ ըրին: Այս քիւր-
տերը կը պատկանէին **Պօչրզցի** էշիրէթին:
Զիւնին վրայ նստեցանք քիչ մը հանգչելու
համար: Քիւրտերը իրենց հացին ծրարները
բացին եւ ծխախոտի փայտէ տուփերը
տուին մեզի ծխելու համար: Օրերով ծխած
չէինք: Հակառակ ձմրան ցուրտին եւ ձիւնին
առթած դժուարութիւններուն, մենք մոռ-
ցած մեր յոգնութիւնը՝ կը քալէինք ժամ ա-
ռաջ տղայոց հասնելու: Հեռուն ձիւնին մէ-
ջէն ուրիշ խումբ մը երեւաց: Հայերուն հար-
ցուցի թէ. «Զեր առջեւէն քալողները որո՞նք
են, գիտէ՞ք»:

«Այո՛ փաշա, ճիժերն են»:

Հազար քայլի չափ հազիւ քալած էինք,
երբ ձիւնին մէջէն մէկը երեւցաւ: Մոկաց
Եսթերին եղբայրն էր: Այն տղան էր որ Ես-

Թերին պատիւը փրկելու համար մուշեցի
 Թուրք շէրիֆը սպաննած եւ մեր մօտ եկած
 էր: Տղան պառկած էր կոնակին վրայ, աչ-
 քերը ծռած էին, լեզուն իր բերնէն դուրս
 ինկած էր, եւ արիւն կը կաթէր: **ՈՒՆՆՆՆՆՆՆՆ**
 Իսկոյն ակոսները բացի եւ գղալի կոթ մը
 անցուցի ակոսներուն տակ լեզուն ազա-
 տելու համար: Քառորդ ժամ շփել տալէս
 վերջ, ձեռքը ձեռնոցներ անցուցի, գլուխը
 փաթթեցի ու քրդերուն շալկեցնելով ճամ-
 բան շարունակեցինք:

Մտահոգ էի, ի՞նչ էր պատահած որ այս
 տղան հոս միս մինակ ձիւնին մէջ ձգուած
 էր: Ինչո՞ւ համար տղայքը իրենց հետ վեր-
 ցուցած չէին զայն, այս մտածումին տակ
 ճնշուած՝ արդէն հասած էինք սարին գա-
 գաթը: Երբ դէպի Քոր երթալու համար ձորը
 մտանք, ձիւնին մէջ մեր տղայոց հրացան-
 ներուն կոթերուն կաղապարները տեսայ:
 Մեր եւ Թուրք զինուորին հրացաններու
 կոթերուն ձեւերը տարբեր էին: Հակառակ
 իմ պատուէրիս, տղայքը անզգոյշ գրտ-
 նուած էին իրենց հրացաններուն կաղա-
 պարներուն հետքերը ձիւնին մէջ թողելով:

Ես պատուիրած էի անոնց որ միշտ զգոյշ
ըլլան ոեւէ հետք չի թողելու իրենց ետեւ
թշնամիին ցոյց չի տալու իրենց ուղղութիւ-
նը կամ անցքը:

Ուրախ էի: Մեր զինուորները մինչեւ հոս
ապահով եկած էին եւ այլեւս ասկէ անդին
ոեւէ վախ ու վտանգ չկար անոնց: Արագ
արագ կը հետեւինք անոնց հետքերուն: Այս
միջոցին Եսթերին եղբայրը սկսաւ լալ ու
խօսիլ:

«Տղա՛յ, ո՞վ էր քովդ»:

«Ասատուրը եւ Վարդանը»:

«Գէորգը, Վաղարշակը, Հաճի Յակոբը եւ
բոլորն ալ գացի՞ն»:

«Այո՛ փաշա, գացին»:

Քոր գիւղի Ձէյնեկցիկ ըսուած գոմերը չի
հասած՝ բռնեցինք տղայքները: Անկարելի
էր բառերով նկարել այն խանդավառ գրկ-
ընդխանումները, համբոյրները եւ արտա-
յայտութիւնները որ պատահեցան այդ գո-
մերուն մօտիկ ճերմակ ձիւնին վրայ եւ կա-
պոյտ երկինքին տակ:

Քիչ վերջ երբ գիւղացիք լսեցին մեր գալը
եւ տեսան մեզ, իսկոյն գացին եւ իրենց խոս-
տումները կատարեցին մատաղներ ընելով:

Եօթը ոչխարներ մորթուեցան այդ օր այդ գիւղին մէջ:

Գէորգ Չաուշը քովս կանչեցի Հասկնալու Համար թէ ի՞նչ պատահած էր իրենց որ չընկերացան ինծի, այլ թեքուեցան դէպի ձորը:

Գէորգ պատասխանեց թէ երբ թուրք գինուորին հետ կը խօսէիք, տղայքները առանց հնազանդելու ձեր պատուէրին, թուրքերուն ետեւի դիրքերը բռնելու, ձորն ի վար սահեցան շուտ ազատելու Համար: **Ցրոնքէն** նոր եկող անվարժ գինուորներէն մէկը հակառակ պատուէրիդ եւ իմ խուզարկութեանս, իր հրացանը գաղտնի լեցուցած է եղեր, ձորն ի վար սահելու ատեն հրացանը յանկարծ պայթեցաւ եւ գնդակը գնաց Մկրօին ապան ծակեց եւ ջարդ ու փշուր ըրաւ Մկրօին փամփուշտակալը: Մկրօն խորհեցաւ թէ զարնուած է, ուստի սկսաւ պոռալ եւ անունս տալ: Վազեցի եւ քննեցի, ու տեսայ թէ զարնուած չէ: Այդ ատեն՝ տրդան վախնալով թէ Մկրօն մեռած է, ձգեց մեզ ու փախաւ: Հազիւ քանի մը վայրկեան անցած էր, Հաճի Յակոբին ձայնը լսեցի որ այն ալ իմ անունս կուտար ըսելով՝ որ վի-

րաւորուած է եւ չի կրնար քալել: Մօտեցայ եւ տեսայ թէ վիրաւորուած չէր հակառակ իր աղմուկին եւ վախին: Զորն ի վար սահելու ատեն բարձրութենէ մը վար ինկած էր եւ սուր քար մը անոր զիտը մխուած էր քչիկ մը արիւնելով: Այս դէպքը Հաճի Յակոբին խորհիլ տուած էր թէ վիրաւորուած է:

«Ի՞նչպէս եղաւ որ դուք գոմը չի կրցիք գալ»:

«Գոմը չի կրցինք գալ, քանզի քամին շատ սաստիկ էր, եւ մենք մեծ դժուարութեամբ Սինէ Մերիկ չի գացած՝ սարը ուղղուեցանք եւ անկէ եկանք Քոր»:

ՏՆՈՒՐ ՄԻՋԱԴԷՊ ՄԸ

Գիւղացիք եւ զինուորները ուրախութեան մէջ էին: Մեծ կաթսաներ դրուած էին կրակին վրայ կերակուր պատրաստելու համար: Քսան օր 6000 զինուորներու հետ կոտուղ խումբ մը քաջեր կը հիւրասիրուէին իրենց հայրենակիցներէն, սիրալիր եւ խընդումներս: Բերկրանք մըն էր տեսնել Հայ

գիւղացին այդ խանդավառութեան մէջ, հրճուանք էր տեսնել նաեւ Հայ հարազատ զինուորը իր յաղթանակին մէջ: Ամէնքը ուրախ եւ զուարթ էին: Մէկը նստած իր հրացանը կը իւղէր, կը մաքրէր, ուրիշ մը իր հագուստները կը չորցնէր, ուրիշներ խորովածներու շիշերը կը դարձնէին կրակին վրայ, յաղթանակի տօնը տօնելու եւ ուրախութեան հացը ճաշակելու համար: Գինովքի եւ հրճուանքի այս իրարանցումին մէջ միտքս ակամայ կ'երթար, կը հասնէր դէպի վանք: Արդեօք ի՞նչ եղան որբերը, ի՞նչ համարձակութեամբ եւ վայրի ատելութեամբ թուրքեր իրենց պիղծ ոտքերը ներս դրին այդ օրհնուած սրբավայրէն: Ի՞նչպէս անոնք կրնային համարձակ ու անվախ ներս մտնել, երբ դեռ երէկ չէին կրնար իրենց գլուխները բարձրացնել իրենց պատնէշներուն ետեւէն նայելու այդ հոյակապ գմբէթին, որուն վրայ քառաթեւ խաչը կը փայլէր լերան կատարին առնթեր, կապելով Հայ ժողովուրդին սէրն ու հակատքը դէպի իրեն եւ դէպի իր հարազատ կոռուող զաւակները:

Այս ցաւը, այս վիշտը երկաթի պէս ծանր կ'իջնէր երբ այդ պզտիկներուն հետ սիրե-

լի Յարութիւնը եւ Ղազարը իրենց դալուկ դէմքերով աչքերուս առջեւ կուգային: Կարծես դեռ ականջիս մէջ կը հնչէին անոնց վերջին հառաչանքները, վրէժի ուխտը: Անոնք ինկած էին Ազգին Ազատութեան համար, մխիթարութիւնն ունենալով որ իրենց գերեզմանը պիտի ըլլար վանքին օրհնուած հողը միայն: Վշտի ու ցաւի պարբերական զգացումներուն տակ փսփսուք մը, իրարանցում մը նշմարեցի զինուորներուն եւ ժողովուրդին մէջ: Փոխուեցան տրամադրութիւնները, այլայլուեցան անոնց դէմքերը, քիչ առաջուան խանդավառ ցոյցերը եւ ծիծաղները չկային, ամէնքն իրենց ձեռքերը կուրծքերուն տարած գլխիկոր նստած էին: Ի՞նչ կար, ինչո՞ւ համար վհատեցան անոնք, անո՞նք որոնք քսան օր անհաւասար գոյամարտ մը մղած էին եւ ընկճուած չէին: Ի՞նչ պատահած էր որ հարուածը անոնց սրտին, անոնց կուրծքին իջած էր: Պոռացի իսկոյն:

«Գէո՛րգ, Գէո՛րգ, ի՞նչ պատահած է, ըսէ ինձի»:

Ոչ ոք չի պատասխանեց: Ստիպեցի որ խօսի: Սուգը դէմքին վրայ եւ ցաւը աչքե-

րուն մէջ, պատմեց թէ զինուորներէն մէկը ծանր կերպով վիրաւորուած էր տղայոց մէկին գնդակէն եւ կը փափաքի վերջին անգամ քեզ տեսնել:

Բոպիկ եւ գլխարաց ձիւնին մէջէն՝ վազեցի զինուորին քով: Սասգիւղցի Մկրօն իր հրացանը մաքրելու ատեն, յանկարծ պայթած եւ վիրաւորած էր ծանր կերպով **Տէր-քէվանքցի Բարսեղը**: Երբ Բարսեղը տեսայ, սկսաւ լալ: Գրկիս մէջ առի եւ համբուրեցի: Տեսայ վէրքը, սրտի աջ մասէն զարնուած էր եւ գնդակը կուրծքին մէջ մնացած էր: Յոյս չկար ազատելու: Փորձ մը ըրի, յուսահատ փորձ մը: Բերանս վէրքին բացուածքին վրայ դրի եւ սկսայ ծծել գնդակը դուրս բերելու յոյսով, բայց ի դուր: Արտասուալի աչքերով իր վերջին խօսքերը զրուցեց. «Լաւ կ'ըլլար որ զիս ալ Յարութիւնին քով պատուաւոր մահով մը թաղէիր, քան թէ ընկերոջ մը ձեռքով իյնայի: Մկրօն չի յանդիմանես, որովհետեւ անփորձ էր եւ եղածը ակամայ եղած էր»:

«Ուրիշ ի՞նչ կ'ուզես Բարսեղ»:

«Հաւանական է որ կինս ամուսնանայ, տղաս ձեզի կը թողում, անոր կըթուլթեան հոգ տարէք»:

Շարունակ ջուր կը խնդրէր, Աստուծոյ եւ Քրիստոսի անունով: Գլուխը թեւերուս մէջ առնելով խոշոր աման մը ջուր խմցուցի: Երկու վայրկեան վերջ գոյնը փոխուեցաւ ու լեզուն բռնուեցաւ: Հասկցայ որ այլեւս կը մեռնի: Երկու տղայքներ քովը թողուցի եւ պատուիրեցի որ երբ մեռնի դիակը **Քոբ** գիւղը թող բերեն:

Բարսեղի քովէն հազիւ վերադարձած էի, երբ գիւղացիք եկան ու ըսին. «Փաշա, եթէ թուրք զինուորները գան եւ ըսեն թէ ո՞ւր գացին ճիժերը, ի՞նչ ըսենք անոնց»:

«Ես ձեզի իրաւունք կուտամ որ չուրանաք մեր հոս գալը: Ըսէք թէ չենք գիտեր քանի՛ հարիւր հոգի էին երբ գիւղը մտան: Ամէնքն ալ զինուած էին, տասը, տասնեւհինգ հոգի ծեծեցին, բռնի հաց առին, մեզ քանի մը տուներու մէջ լեցուցին, դռները փակեցին, պահապաններ դրին: Կէս ժամ հազիւ անցած էր, դուրս ելանք եւ տեսանք թէ ոչ ոք չկար: Չենք գիտեր ո՞ւր կամ ո՞ր կողմը գացին: Ճամբայ մը Ծովասար, ճամբայ մը Աղբի, ճամբայ մը Շուշնամերկ, Կէլիկուզան կ'երթայ»:

Երբ այս իրաւունքները տուի իրենց ուրախացան, եթէ այս թելադրանքները չընէի, Հաւանական էր որ ծեծի տակ մատնութիւններ ըլլային:

Այս խօսակցութենէն Հազիւ քանի մը վայրկեան անցած էր, երբ լուր եկաւ թէ Բարսեղը մեռաւ: Լուր ղրկեցի Տէր Գարեգին քահանային որ գայ եւ թաղումը կատարէ: Գիւղացիք ինծի խոստացան թէ իրենք ամէն բան պիտի կատարեն եւ թաղեն Բարսեղը գիւղի գերեզմանատան մէջ:

* * *

Մեր երկու հիւանդ զինուորները եւ ութը գիւղացիներ մեզի հետ առնելով գիշեր ատեն ճամբայ ինկանք: Լուսաբացին Հասանք **Գիւղաշէն** գիւղը: Տեղացիք մեզ տեսնելով սարսափահար լեռը փախան մեզ թուրք զինուորներ կարծելով: Երբ լուր հասաւ անոնց թէ մենք ենք, իսկոյն լեռնէն վար եկան: Այս գիւղացիք ալ ուրիշ գիւղացիներու նման մատաղ խոստացած էին: Այս գիւղին մէջ յայտնի դէմք մը կար որ **Գրէ** անունով կը կոչուէր: «Լաւօ, Տօնէ, տղաս

զնա՛ եւ ըսածս ըրէ»։ Երկու եզ ունեցած է, որուն մէկը խոստացած էր մատաղ ընել մեր ազատութեան համար։

Այդ գիշեր լուր տարածուեցաւ շրջանի գիւղերը, Շէնիկցիք, Սէմալցիք, Կէլիկուզանցիք, Աղբէցիք, թուով մօտ երեք հարիւր զինուած մարդիկ լեցան գիւղը։ Մեր հիւանդները փոխադրեցին սահնակներով ապահով տեղեր խնամելու զանոնք։ Յաջորդ օր ալ հոս մնալէ վերջ անցանք Սէմալ։ Սէմալի նորընծայ Տէր Կարապետը ծանուցում ըրաւ ժողովուրդին եւ հարիւր կոտ ցորեն հաւաքելով ալիւր ըրաւ եւ մեզի բերաւ մեզի հետ Կէլիկուզան տանելու համար։

Սասունցի բոլոր իշխանները (մեծերը) մեզի եկան եւ հարց տուին. «Ի՞նչ կը մտածես փաշա, թուրք զինուորը կուգա՞յ ետեւէդ»։

«Ապահով եղէք, մէկ թուրք զինուոր իսկ չի կրնար քաջութիւնն ունենալ հոս գալու այս ձիւնին ու փութին, եթէ անոնք փորձեն այդ լեռներէն անցնիլ, բոլորն ալ կը կոտորուին»։

Միւս օր փոխադրուեցանք Կէլիկուզան եւ մտածեցինք մեր ռազմանիւթին եւ հրա-

ցաններուն մասին: Կոտրտած հրացանները շինեցինք, մաքրեցինք միշտ պատրաստ ըլլալով ուէ մէկ պատահարի դէմ: Մենք ամէն օր լուր կ'ստանայինք այն բոլոր դէպքերուն եւ զրոյցներուն մասին որոնք տեղի կ'ունենային Մուշի եւ շրջանի գիւղերուն մէջ:

* * *

Վանքին մէջ մեզ պաշարող 6000 թուրք զինուորներուն մէջ հիւանդութիւն մը ճարակած էր: Հիւանդութիւն մը՝ որ նոր էր իր տեսակին մէջ ու անհասկնալի: Կ. Պոլսէն, Երիզայէն բժիշկներ բերուեցան այդ հիւանդութեան առաջին առնելու եւ դարմանելու համար: Ամէն անոնք որոնք կը վարակուէին այդ հիւանդութեամբ, իրենց թոքերը կը մաշէր ու կը հատնէր մինչեւ որ մեռնէին: Գտնուեցան բազմաթիւ զինուորներ ալ որ խելագարեցան եւ փողոցներ ինկան: Այս տեսարաններէն թուրք եւ քիւրտ ժողովուրդները սարսափած զրոյցներու ծայր տուին: «Հարկաւ կը մեռնին ու կը խենդա-

նան, այսքան տարուան Հինաւուրց վանքին վրայ գնդակ նետողները»:

Ժողովուրդին զրոյցներուն Համաձայն 1800 թուրք զինուորներ մեռած եւ սպաննուած էին քսան եւ մէկ օրուան մէջ, ըստ կառավարական պաշտօնական տեղեկագրին 33 թուրք զինուորներ մեռած էին: Այն Հայերը որոնք զինուորին միսը, Հացը, կօշիկը եւ Հագուստը պայմանարկած (խոնտուրաթ) էին, անոնց տուած տեղեկութեան Համաձայն թէ սպաննուած եւ թէ մեռած էին քսան եւ մէկ օրուան մէջ 553 թուրք զինուորներ:

1903ին ինծի մօտ եկան իրենց զէնքերով միասին վանքը պաշարող թուրք զինուորներէն մէկ քանին: Այս զինուորները կարգ մը դէպքեր պատմեցին որոնք մեզի Համար բոլորովին նորութիւններ էին: Զինուորներէն մէկը **Զիա պաշչաւուշ**, իսկ միւսը **Ապտուլլահ օնպաշի** անուններով կը կոչուէին: Ասոնք մինչեւ 1904 Սասունի կռիւներուն իմ քովս մնացին եւ ինծի օգտակար եղան թարգմանելով թրքական բոլոր Հրամանները որոնք փողի ձայնով (պօսօզան) թուրք զինուորին կը տրուէին: Երբ 1909ին գաղտնի

անցագրով Կ. Պոլիս գացած էի, յանկարծ «Ազատամարտ»ի խմբագրատան մէջ ինծի հանդիպեցաւ այս զինուորներէն մէկը:

Այս թուրք զինուորները դժգոհ իրենց վիճակէն, ինծի մօտ եկած էին հանգիստ հաց մը ուտելու: Անոնք պատմեցին թէ ձեր յաջողութիւնը հարկադրեց կառավարութիւնը, որ թնդանօթ քաշէ ձեր վրայ: Ալի եւ Ֆէրիք փաշաները որոնք 6000 զինուորներուն հրամանատարներն էին, անհամաձայնութիւն մը ունեցած էին իրենց մէջ վանքին վրայ թնդանօթ քաշելու խնդրոյն շուրջ: Ալի փաշան կը պնդէր թէ թնդանօթ պէտք էր բերել եւ դարնել, թէ ոչ այդ մարդիկը վանքէն դուրս կուգան եւ մենք անպատիւ կ'ըլլանք թէ կառավարութեան եւ թէ ժողովուրդին առջեւ, բայց Ֆէրիք փաշան կը հակառակի առարկելով թէ իրենն ոեւէ հրաման չկայ Կ. Պոլսէն:

Ալի փաշան դժգոհ Երիզա կը մեկնի 4րդ բանակէն թնդանօթներ եւ նոր հրաման ու զինուորներ բերելու համար: Իր կէս ճամբուն վրայ լսելով ձեր վանքէն դուրս գալը ետ կը վերադառնայ:

Ժողովրդական գրոյցներու համաձայն Ֆէրիք փաշան իսկոյն Կ. Պոլիս կանչուած է մեր վանքէն դուրս գալէն վերջ՝ սա ամբաստանութեամբ թէ «Ֆէրիք փաշան վանքը պաշարող շղթային մէկ մասը պարապ ձգած է Անդրանիկ Փաշայի եւ իր զօրքերուն առջեւ, Անդրանիկ Փաշայէն հսկայ գումարներ կաշառք ստանալով»: Արդէն Տիգրանակերտէն մինչեւ Պիթլիս, Վան, Նարբերդ եւ Կարին նահանգները շրջան ըրած էր մեր պաշարուիլը վանքին մէջ: Այնպէս հաւտացուցած էին ժողովուրդը թէ այլեւս հնարաւորութիւն չկայ հայ յեղափոխականներու ազատութեան, բայց հիմա մենք անվնաս եւ ազատ դուրս եկած էինք վանքէն: Մեր ազատութիւնը անըմբռնելի էր հասարակ ժողովուրդին եւ պաշտօնեաներուն: Մեր յաղթանակը խաղի եւ կաշառքի քօղովը ծածկել ջանացին, իրենց անկումը եւ տկարութիւնները ծածկելու համար:

Վանքին մէջ երբ պաշարուած էինք մենք, Մուշի բանտին մէջ Սեւ Քարեցի Սազօն եւ Ճիպրանցի քիւրտ Համիտիէ Ալայի հրամանատարներէն մէկը գրաւի կուգան մեր ազատութեան համար: Ճիպրանցի տղան որ բանտարկուած էր Սազօի պէս, օր մը բարեկամանալով Սազօի հետ կ'ըսէ. «Սազօ', Անդրանիկ Փաշան պիտի ազատի վանքէն»: Քիւրտ աղային այս խօսքերէն ազդուած՝ Սազօն կ'ըսէ. «Ի՞նչ բանի վստահելով կ'ըսես այդ, աղա, քանի որ ես գիտեմ թէ այլեւս անկարելի է անոր եւ իր զինուորներուն ազատութիւնը, երբ 6000 զինուորներ չըլթաներ ձգած արգիլած են անոնց ազատութիւնը»:

«Սազօ', եթէ այդ մարդը չազատի, ես իմ ձիերէս մէկը քեզի նուէր պիտի տամ, եթէ ազատի դուն ինծի ի՞նչ պիտի խոստանաս»:

«Ես հոս բան մը չունիմ բացի իմ սազէս, բայց երբ ազատուիմ ու երթամ Ռուսաստան, ես ալ քեզի աղուոր նուէր մը կը դրրկեմ»:

Օր մը Մուշի բանտարկեալներն ալ կը լսեն մեր վանքէն ազատիլը: Քիւրտ աղան իսկոյն կը պոռա. «Սագօ՛, Սագօ՛, տեսա՞ր, ես չըսի՞ թէ այդ մարդը պիտի ազատի»: Սագօն կը մօտենայ եւ կ'ըսէ. «Աղա, ի՞նչ բան թելադրեց քեզ որ խորհիս թէ Անդրանիկ Փաշան պիտի ազատի»: «Սագօ՛, այս մարդը այսքան տարի է հոս է, լսա՞ծ էք որ անմեղի մը քիթը արիւնէ կամ անիրաւ տեղը մէկը սպաննէ: Աստուած այդ մարդը չազատէր հապա ո՞վ ազատէր: Այս էր իմ հաւատքս, որ ինծի խորհիլ կուտար թէ պիտի ազատուին»:

* * *

Յունվ. ամիսն էր. Մուշի երբեմնի Առաջնորդի փոխանորդ Տէր Յարութիւն քահանայի հետ Ռուս հիւպատոս Պ. Րումանովսքի լուր դրկած էր ինծի Սասուն՝ թէ կարելի՞ է տեսակցութիւն մը ունենալ: Պատասխանեցի թէ՛ եթէ իրեն հետ տեսնուիմ Մուշի մէջ, պէտք է ինծի հետ ընկերանան 150 զինուած տղայքներ: Անմիջապէս պատասխան դրր-

կած էր, թէ, «Ո՛չ, ո՛չ, ո՛չ, եթէ ինք չկրնար
գալ, թող իր գրագիրներէն մէկը ղրկէ»:

Նախ մտածեցինք Վաղարշակը ղրկել,
բայց յետոյ խորհեցանք թէ արժէք ունեցող
բան մը պիտի չըլլար հիւպատոսին ըսած-
ները, ուստի լուր ղրկեցի Տէր Հօրը թէ.
«Եթէ այդ մէկը մօտը ղրկեմ, ան չի կրնար
վերջնական պատասխան մը տալ քեզի ա-
ռանց մեզի հետ խորհրդակցելու: Հիւպա-
տոսը քեզի թող խօսի եւ դուն ալ մեզի բեր
անոր ըսածները»:

Լուրերու Սասունէն Մուշ երթալ գալը
մինչեւ Փետրուար ամիսը տեւեց: Օր մը Տէր
Յարութիւն քահանան հետեւեալ լուրը ղըր-
կեց ինծի: «Թուրք կառավարութիւնը բոլոր
կատարուած չարիքները կը ձգէ ձեր՝ յեղա-
փոխականներուդ վրայ, առարկելով թէ
դուք էք որ կը խանգարէք երկրին անդոր-
րութիւնն ու խաղաղութիւնը: Եթէ անոնք
հեռանան այս երկրէն, գայլ եւ գառնուկը
մէկտեղ պիտի ապրին ու մենք պատասխա-
նատու կ'ըլլանք ամէն արեան կաթիլի, հե-
տեւապէս Ռուսիոյ հիւպատոսը կը թելադրէ
ձեզ որ ատենուան մը համար հեռանաք այս
երկրէն: Ես, կ'ըսէ հիւպատոսը, Պոլսոյ մեր

Ռուս դեսպանին միջոցաւ ձեզի ներում կը բերեմ եւ ձեզի հետ ձին հեծած ապահով կերպով մինչեւ Պարսկաստան կը տանիմ»:

Ես ալ պատասխանեցի հետեւեալը.

«Մենք այս երկրին զաւակներն ենք: Ինչպէս ինք Ռուս պաշտօնեայ մը իր պետութեան հրամանները կը կատարէ, մենք ալ մեր վերին հրամանները կատարող պաշտօնեաներ ենք հոս, առանց ձեզի վերէն տրուելիք հրամանին ասկէ դուրս չենք կրնար գալ: Թող ինք շարունակէ հայ ժողովուրդը Օրթոտոքս Եկեղեցիին դարձնել, իսկ մենք ալ կը շարունակենք մեր գործը: Ծնորհակալութիւն յայտնեցէք մեր կողմէն իր բարեացակամ վերաբերմունքին եւ առաջարկներուն համար»:

Օրթոտոքսութեան խնդիրը կարծեմ այնքան յառաջ գացած էր, որ Հայ Եկեղեցին օրթոտոքս ձեւով պատարագ պիտի ընէր: Բաւական ջանքերէ վերջ երբ Ռուս հիւպատոսը տեսաւ թէ ոեւէ յաջողութեան յոյս չկայ, Զատկի կանաչ Կիրակին Մուշէն մեկնեցաւ մէկ քանի քաջալերական խօսքեր խօսելով Մուշի աչքառու հայ ղէմքերուն, ջատագովելով իր աշխատանքները, յայտ-

նելով անոնց թէ մօտ ատենէն դարձեալ
Մուշ պիտի վերադառնայ:

* * *

Արդեօք 1914ի ընդհանուր պատերազմին
եթէ Մուշի դաշտին հայ ժողովուրդը Օրթո-
տոքս Եկեղեցին ընդունէր, պիտի կոտոր-
ուէ՞ր, ինչպէս կոտորուեցան կաթոլիկ եւ
բողոքական հայերը: Պատասխանս է. «Այո՛,
պիտի կոտորուէր»:

Ֆրէզնօ, 5 Ապրիլ 1924

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Քանի մը խօսք Առաքելոց Վանքի	
կոիւին առթիւ	5
Առաքելոց Վանքին կոիւր	11
Առաքելոց Վանքը	20
Դէպի վանք	23
Խուզարկութիւն մը	28
Իրարանցում մը	31
Նոր փորձ մ'ալ	34
Յարութիւն եւ Ղազար կը վիրաւորուին	39
Հիւպատոսը կը մեկնի Մուշէն	44
Մեծ կոիւի նախօրեակին	47
Յարութիւնին մաշը	56
Տեսակցութիւն մը թուրք ներկայացուցիչ-	
ներուն հետ	59
Վանքէն դուրս գալու ջանքեր	72
Առաքելոց վանքին կոիւին մասնակցող	
զինուորները եւ անոնց անունները	75
Հանդիպումը	93
Տխուր միջադէպ մը	99

ԱՆԴՐԱՆԻԿ
ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔԻՆ ԿՈՒԻԼ

ANDRANIK
THE FIGHT OF ARAKELOTZ MONASTERY

Հրատ. խմբագիր՝	Լ. Գ. Մանուկյան
Կազմի ձևավորումը՝	Գ. Վ. Մարիկյանի
Տեխ. խմբագիր՝	Վ. Զ. Բղոյան
Համակարգչային շարվածքը	
և ձևավորումը՝	Թ. Շ. Վարդանյանի
Սրբագրիչ՝	Վ. Վ. Դերձյան

Ստորագրված է տպագրության՝ 31. 01. 2012 թ.:
Չափսը՝ 60x84¹/₃₂: Թուղթը՝ օֆսետ:
Տպագրության եղանակը՝ օֆսետ:
Հրատ. 2,5 մամուլ: Տպագր. 3,6 մամուլ: Տպաքանակ՝
1000: Պատվեր՝ 3:

ԵՊՀ Հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան
YSU Press, Yerevan, Al. Manoogian st. 1

ԵՊՀ տպագրատուն, Երևան, Աբովյան 52
YSU Printing House, Yerevan, Abovyan st. 52

